



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# Ինչպես պատրաստել մասնագիտական կրթական ծրագիր

*Մեթոդական ուղեցույց մասնագիտական  
կրթության ծրագրի պատասխանատուների  
համար*

ԵՐԵՎԱՆ 2014

## **Ներածություն**

Բարեփոխումների ընթացքը բարձրագույն կրթության համակարգում բազմաբևեռ գործընթաց է: Այս գործընթացի կարևոր մաս է կազմում մասնագիտությունների կրթական ծրագրերի (այսուհետ ՄԿԾ) վերակառուցումն ըստ ուսումնառության վերջնարդյունքների: Սույն ուղեցույցը նպատակ է հետապնդում ՀԱԱՀ ՄԿԾ պատասխանատուների և նրանց խմբերին հստակ ցուցումներ տալ ինչպես կազմել վերջնարդյունքներին ուղղված ՄԿԾ:

Համալսարանը վերջին տարիների ընթացքում վերանայել է ՄԿԾ-ները՝ ներդնելով ուսուցման եռաստիճան համակարգը, կրեդիտային համակարգը և այլն, որպեսզի ՄԿԾ-ները համապատասխանեցնի Բոլոնիայի գործընթացի պահանջներին, սակայն մինչ օրս

- Համալսարանի ՄԿԾ-ները չունեն ամբողջական տեսք. առկա են միան պետական չափորոշիչներ և ուսումնական պլաններ:

- Համալսարանի ՄԿԾ-ները չունեն վերջնարդյունքներ, որոնք համահունչ լինեն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 31-ի N 332-ն որոշումով հաստատված ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՀՀ կրթության որակավորումները և դրանց համապատասխան ընդհանրական բնութագրերը) համապատասխան որակավորումներին,

- Համալսարանի ՄԿԾ-ները ամբողջական չեն և անհրաժեշտություն կա դրանք ներմուծել համալսարանի կողմից մշակված ձևաչափի մեջ,

- Համալսարանի ՄԿԾ-ները ուղղված չեն վերջնարդյունքների ձեռքբերմանը,

- Համալսարանի ՄԿԾ-ների վերանայման գործընթացում հաշվի չի առնվել գործատուների և շրջանավարտների կարծիքները,

Հաշվի առնելով արդեն բացահայտված խնդիրները և արդի ժամանակաշրջանում աշխատաշուկայի պահանջների առազընթաց փոփոխությունները՝ կարիք է առաջանում բարելավել Համալսարանում առկա ՄԿԾ-ները հիմք ընդունելով “Թյունինգի\*” մեթոդաբանությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է խորությամբ ուսումնասիրել առկա ՄԿԾ-ները, բենչմարք անել

տեղական և միջազգային բուհերի նմանատիպ ծրագրերի հետ, որպեսզի ապագայում հնարավոր լինի ապահովել նաև ծրագրի միջազգայնացումը (որը հնարավորություն կտա նաև շարժունության ապահովել), անընդհատ ուսումնասիրել գործատուների և շրջանավարտների կարծիքները և այլն:

ՄԿԾ բարելավում, վերաձևավորում ըստ ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների և որոշ ՄԿԾ-ների խոշորացում գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար ընտրվել է փուլային սկզբունքը, ինչը հնարավորություն կտա ՄԿԾ պատասխանատուների միջև փորձի փոխանակման և ընթացիկ պլանավորման ու իրականացման գործիքների բացահայտված թերացումների վերացման համար:

**Մասնագիտության Կրթական Ծրագիրը ունի հետևյալ կառուցվածքը  
հիմնական տարրերն են՝**

- նպատակ (փիլիսոփայությունը) և խնդիրներ
- ուսումնառությունից ակնկալվող վերջնարդյունքները
- ակնկալվող վերջնարդյունքներին հասնելու համար անհրաժեշտ դասավանդման և ուսումնառության մեթոդները, գնահատման մեթոդները, ռեսուրսները
- ծանրաբեռնվածության /ուսումնական պլան/ սահմանում արտահայտված կրեդիտներով
- դասընթացների բնութագրությունները, որտեղ հստակ սահմանված են դասընթացների նպատակը, ակնկալվող վերջնարդյունքները (համաձայն ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից 24.05.2013 թ. (արձանագրություն № 13) հաստատված Առարկայական ուսումնական ծրագրերի մշակում ուղեցույցի)
- Շրջանավարտների Մասնագիտական Զբաղվածության Պրոֆիլները
- Ինչպես է ապահովվելու կրթական ծրագրի որակը
- 


**ՄԿԾ-ի մշակումը ենթադրում է հետևյալ երեք կարևոր խնդիրների լուծում**

1. Ինչ պետք է սովորեն ուսանողները (ուսումնառության վերջնարդյունքները):
2. Ինչպես նրանք պետք է այն սովորեն (դասավանդման և ուսումնառության մեթոդները):
3. Ինչպես պարզել ուսումնառության արդյունքները ձեռք են բերվել, թե ոչ (գնահատման ձևերը)

## ***ՄԿԾ նպատակի ձևավորումը***

ՄԿԾ-ի մշակումը սկսում է ծրագրի նպատակի սահմանումից: ՄԿԾ-ի նպատակի, այսինքն նրա փիլիսոփայության ձևավորումը հանդիսանում է բարդ և կարևոր խնդիր ծրագրի պատասխանատուների համար, քանի որ այն արտահայտում է այդ ՄԿԾ-ն մշակողների կողմից պլանավորված կրթական մտադրությունները, որոնք ընդհանուր առմամբ նկարագրում են տվյալ ՄԿԾ-ի գոյության անհրաժեշտությունը: ՄԿԾ-ի նպատակը և խնդիրները պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

- պետք է լինեն հստակ ձևակերպված,
- պետք է լինեն հակիրճ և ձևակերպվեն ուսանողներին հասկանալի լեզվով,
- պետք է համահունչ լինի Համալսարանի առաքելությանը,
- պետք է համահունչ լինի ՈԵՇ-ին, ՈԱՇ-ին, ինչպես նաև ագրարային ոլորտի սեկտորյալ շրջանակին:



Օրինակներ, վերցված ուղեցույցից

**I օրինակ-** Համակարգչային Ինժեներիայի բակալավրի աստիճանաշնորհման ծրագրի նկարագրությունն

**Աստիճանաշնորհ ծրագրի պրոֆիլը**

Համակարգչային ինժեներիայի բակալավրի աստիճանաշնորհման ծրագիրը կազմված է այնպիսի ուսանողներ պատրաստելու համար, որոնք ունեն տարբեր ինժեներական ոլորտների

մասնագիտացվածության վրա հիմնված հզոր մշակութային նախադրյալ և հիմնավոր համակարգչային գիտության փորձ: Դասընթացները նախատեսված են մասնակիցներին ապահովելու այնպիսի հմտություններով, որոնք անհրաժեշտ են համակարգչային սիստեմների և ցանցերի, համակարգչային ծրագրերի միջոցների, ինդուստրիալ ինքնավարության համակարգերի, տեղեկատվության կառավարման համակարգերի, ինտեգրված վերամշակումների և վերահսկման համակարգերի ծրագրավորման, տեղադրման և պահպանման համար: Համակարգչային ինժեներիայի բաժնի շրջանավարտը հիմնականում ինժեներ է, ինչպես նաև Տեղեկատվական Տեխնոլոգիաների լավ պրոֆեսիոնալ մասնագետ:

## **II օրինակ- Պատմության առաջին փուլի աստիճանաշնորհ/բակալավրիատի/ ծրագրի նկարագրությունն**

### **Աստիճանաշնորհ ծրագրի պրոֆիլը**

Այս աստիճանաշնորհ ծրագիրը նպատակաուղղված է թողարկելու ուսանողներ պատմական հետազոտության պրակտիկայի համար՝ շնորհիվ մեծ պատմաժամանակագրական թեմաների և բանավեճերի հիմնարար իմացության, աղբյուրների մեկնաբանման և դիտարկման մեթոդոլոգիաների ձեռքբերման, ինչպես նաև պատմաժամանակագրական դիսկուրսին համապատասխան ճշգրիտ և պարզ լեզվի կիրառման: Ուսումնառությա փորձը կազմակերպվում է դասախոսական շրջափոխվերով, սեմինարների, աշխատաժողովների և լաբորատոր աշխատանքների միջոցով: Բացի այս գործընթացներից ուսանողները կարող են այցելել գիտաժողովների, աշխատաժողովների և հանդիպումների՝ գիտական բանավեճերին ազգային և միջազգային մակարդակներով առնչվելու համար: Այս աստիճանաշնորհ ծրագիրը ունի 4 ուղղություն՝ Հնագույն Պատմություն, Միջնադարյան Պատմություն, Նորագույն Պատմություն և Ժամանակակից Պատմություն:

### **Բիզնես Վարչարարության առաջին փուլի աստիճանաշնորհ ծրագրի/բակալավր/ նկարագրությունը**

### **Ծրագրի պրոֆիլը**

Ծրագիրը նպատակաուղղված է ընձեռելու այնպիսի հնարավորություններ, որպեսզի ուսանողները տիրապետեն այնպիսի գիտելիքների, հմտությունների և կարողությունների, որոնք կդարձնեն նրանց ազգային տնտեսության կոմպետենտ մենեջերներ հարափոփոխ սոցիալ-տնտեսական պայմաններում, որոնք կարող են կիրառել իրենց գիտելիքները՝ կառավարելով գործընթացներն ու լուծելով խնդիրները, ինչպես նաև կայացնելով որոշումներ առնչվող ոլորտներում: Շնորհիվ որակավորումը երաշխավորում է, որ շրջանավարտները ձեռք են բերել ձեռնարկատիրության կատարողականության գլխավոր սկզբունքների ձևակերպման և սահմանման հմտություններ, ըստ ձեռնարկության սահմանված նպատակների՝ աշխատանքների պլանավորման և կառավարման, մարդկանց հետ աշխատելու հմտություններ և տարբեր փոփոխություններին հարմարվելու հմտություններ կտրուկ փոփոխվող բիզնես միջավայրերում, կառավարման ոլորտում՝ մասնագիտական 5-րդ կատեգորիայի որակավորման <sup>o</sup> ձեռնարկատիրությունների և հիմնարկությունների մենեջեր <sup>o</sup> մասնագիտական չափորոշիչներին համապատասխան, որը համահունչ է Լատվիական Որակավորումների Շրջանակի և Եվրոպական

Որակավորումների Շրջանակի 6-րդ մակարդակին: Ուսանողները սովորում են փորձառու և պրոֆեսիոնալ դասախոսական կազմի հսկողության ներքո և ստանում են 240ԵԿՏՓ(160 լատվիական կրեդիտներ): Ուսանողները գտնվում են միջազգային ուսումնառության միջավայրում: Ուսանողները իրավասու են սովորելու Erasmus + փոխանակման ծրագրերում: Նրանք նաև հնարավորություն ունեն սովորելու գործընկեր համալսարանների միջազգային դասախոսական կազմի հսկողության ներքո: Ուսումնական պրակտիկայի կազմակերպումն ու կառավարումը ծրագրի մի մասն է կազմում: Ուսումնական պրակտիկայի հանձնարարությունները հստակորեն ձևակերպված են, հրահանգներն ու ուղեցույցները հասնելի են առցանց բոլորի համար:

**Մ օրինակ- “ Առաջավոր Սպեկտրոսկոպիան Քիմիայում” երկրորդ փուլի/մագիստրատուրա/աստիճանաշնորհ ծրագրի նկարագրությունն ու առանձին դասընթացային միավորի՝ “Զանգվածային Սպեկտրոսկոպիա”-ի ուսումնառության վերջնարդյունքների նկարագրությունը**

Մագիստրատուրայի դասընթացը պատրաստում է ուսանողների, որոնք պետք է դառնան փորձագետներ, զարգացնեն այնպիսի միջազգային հմտություններ, որոնք կնախապատրաստեն նրանց դոկտորական հետազոտությունների, և/կամ արդյունաբերական կարիերայի քիմիական վերլուծություններում և նյութերի կառուցվածքի բնութագրման գործընթացների մեջ: Շարժունության սխեման երաշխավորում է, որ բացի բարձրագույն մասնագիտության ձեռքբերումից և ժամանակակից տեխնոլոգիաների հասանելիության հնարավորություններից, ուսնողները անցնելու են ընդհանուր հիմնական ուսումնական ծրագրեր, որոնք ուսումնասիրվում են Եվրոպայի տարբեր բարձրագույն կրթական հաստատություններում:

### ***ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքների ձևավորումը***

ՄԿԾ-ների վերջնարդյունքները ուրվագծում են այն ձեռքբերումները, որը ուսանողը ունենալու է իր ուսումնառության ավարտին: Վերջնարդյունքների իրականացումը չի կարող գնահատվել անմիջականորեն ուսումնառության ընթացքում, դրանց մեծ մասը գնահատվում են ուսումնառության ավարտին՝ ավարտական ատեստավորման ժամանակ: Նշենք, որ որոշ վերջնարդյունքների ձեռքբերումը կարող է հավաստել ընթացիկ պրակտիկաները և/կամ կատարված կուրսային աշխատանքները:

Նախընտրելի է, որ ուսումնառության վերջնարդյունքները լինեն 8-11-ը, այդ քանակը լիովին բավարար է ծրագրի ընդհանուր դրույթները և բնութագրական առանձնահատկությունները ներկայացնելու համար: Անհրաժեշտ է

վերջնարդյունքները ձևակերպել այնպես, որ ուսունողների, գործատուների համար հասկանալի լինի, թե այդ ծրագրի շրջանակներում ինչպիսի գիտելիքներով, կարողություններով, հմտություններով մասնագետ է պատրաստվում: Դրանք պետք է լինեն հստակ ձևակերպված, չափելի և պետք է ձևակերպվեն նվազագույնը ընդունելի մակարդակում: Ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է յուրացնի ծրագրի բոլոր կրթական վերջնարդյունքները: Վերջնարդյունքների ձևակերպման համար պետք է հիմք ընդունել ՈԱՇ-ը, Դուբլինյան նկարագրիչները և Բլյումի տաքսոնոմիան:

Դուբլինյան նկարագրիչներում տարբերակվում են կոմպետենցիաների ձեռք բերման 5 փուլ.

1. Գիտելիք և ըմբռնում
2. Կիրառելով գիտելիք և ըմբռնում
3. Դատողություններ անել
4. Հաղորդակցություն
5. Ուսման հմտություններ:

Մակարդակներից յուրաքանչյուրի համար (բակալավր, մագիստրոս, դոկտոր) այս փուլերից յուրաքանչյուրում սահմանվում է չափանիշ: Դուբլինի նկարագրիչները նաև օգտակար են այն առումով, որ համեմատում են ակնկալիքները հինգ ոլորտներում՝ գիտելիք և պատկերացում, դրանց կիրառումը, դատողություններ անելը, հաղորդակցվելը և ուսման հմտությունները: Յուրաքանչյուր 3 փուլի համարակնկալիքները (կարճ փուլի որակավորումներն այստեղ ընդգրկված չեն) ներկայացված են աղյուսակ 2.3-ում:

Աղյուսակ 2.3 Դուբլինի նկարագրիչներ. Փուլերի տարբերակում

Փուլ	Ակնկալիքներ
<b>Գիտելիք և ըմբռնում</b>	
1 (բակալավր)	Ձեռք է բերվում խորացված դասագրքերի շնորհիվ և միաժամանակ ունի որոշ կողմեր, որոնք ձեռք են բերվում իրենց ուսումնառության բնագավառի առաջավոր գիտելիքի իմացության միջոցով



2 (մագիստրոս)	Հիմք է ծառայում կամ հնարավորություն է ընձեռում ինքնատիպության՝ գաղափարներ մշակելիս կամ կիրառելիս, հաճախ որևէ գիտահետազոտական աշխատանքի համատեքստում
3 (դոկտոր)	Ներառում է իրենց ուսումնառության ոլորտի մասին համակարգված պատկերացում և այդ ոլորտի հետ կապված հմտություններ ու գիտահետազոտական մեթոդներ
<b>Կիրառելով գիտելիք և ըմբռնում</b>	
1 (բակալավր)	Փաստարկների մշակման և հիմնավորման միջոցով
2 (մագիստրոս)	Խնդրի լուծման ունակությունների միջոցով կիրառված նոր և անձանոթ միջավայրերում ավելի լայն կամ բազմառարկայական համատեքստերում
3 (դոկտոր)	(դրսևորված է) ունակություն հետազոտության իրական գործընթացը գիտական հստակությամբ նախաձեռնել, մշակել, կիրառել և տեղայնացնել ներդրված մասնաբաժնի (համատեքստում է), գիտելիքի սահմաններն ընդլայնող ինքնատիպ հետազոտություն, զգալի նյութեր մշակելու միջոցով, որոնց մի մասը հրատարակվել է երկրում և դրա սահմաններից դուրս:
<b>Դատողություններ անել</b>	
1 (բակալավր)	(ընդգրկում է) համապատասխան տվյալների հավաքագրում և մեկնաբանում
2 (մագիստրոս)	(ցուցադրում է) կարողություն ինտեգրել գիտելիքը և հաղթահարել բարդ իրավիճակները և ձևակերպել դատողություններ ոչ լրիվ տվյալների հիման վրա
3 (դոկտոր)	(պահանջում է լինել) ի վիճակի քննադատական վերլուծության ենթարկել, գնահատել և սինթեզել նոր և բարդ գաղափարներ
<b>Հաղորդակցություն</b>	
1 (բակալավր)	Տեղեկություններ, գաղափարներ, խնդիրներ և լուծումներ
2 (մագիստրոս)	Եզրակացություններ և հիմքում ընկած գիտելիք ու տրամաբանական հիմնավորում (սահմանափակ չափով) մասնագետ և ոչ մասնագետ լսարանի առջև (մենախոսություն)
3 (դոկտոր)	Իրենց գործընկերների, ավելի լայն գիտական համայնքի և հասարակության հետ ընդհանուր առմամբ (երկխոսություն) իրենց փորձառության բնագավառի շուրջ (լայն ծավալով)
<b>Ուսման հմտություններ</b>	
1 (բակալավր)	Մշակել են այնպիսի ուսման հմտություններ, որոնք անհրաժեշտ են իրենց հետագա ուսումն իրականացնելու ինքնուրույնության բարձր

	աստիճանով
2 (մագիստրոս)	Սովորում են հիմնականում ինքնուրույն կամ անկախ ձևով
3 (դոկտոր)	Ակնկալվում է, որ ակադեմիական և մասնագիտական շրջանակներում կարող են խթանել տեխնոլոգիական, սոցիալական և մշակութային առաջխաղացումը

**Որակավորումներ/ բակալավրի, որոնք նշում են առաջին փուլի ավարտը, շնորհվում են այն ուսանողներին, ովքեր**

- Դրսևորել են ուսման բնագավառում գիտելիք և պատկերացում, որոնք հիմնվել են ընդհանուր միջնակարգ կրթության վրա կամ փոխարինել են նրանց միջնակարգ կրթությանը, և սովորաբար այնպիսի մակարդակում, որում թեև կան խորացված դասագրքեր, սակայն դրա որոշ կողմերին կարելի է հասնել իրենց ուսման բնագավառի առաջավոր գիտելիքի իմացության միջոցով,
- ...կարող են իրենց գիտելիքն ու պատկերացումը կիրառել այն ձևով, որը ցույց է տալիս արհեստավարժ մոտեցում իրենց աշխատանքի կամ մասնագիտության նկատմամբ, և ունեն կարողություններ, որոնք սովորաբար դրսևորվում են իրենց ուսումնառության առարկայի շրջանակներում փաստարկների մշակման , հիմնավորման ու խնդիրների լուծման մեջ,
- Ունեն համապատասխան տվյալներ հավաքելու և մեկնաբանելու ունակություն (սովորաբար իրենց ուսումնառության առարկայի շրջանակներում) սոցիալական, գիտական և բարոյական համապատասխան խնդիրների շուրջ մտորումների վրա հիմնված դատողություններ առաջ քաշելու նպատակով,
- Կարող են տեղեկատվություն , գաղափարներ, խնդիրներ և լուծումներ հաղորդել ինչպես մասնագետ, այնպես էլ ոչ մասնագետ լսարանին,
- Զարգացրել են ուսումնառության այնպիսի հմտություններ , որոնք իրենց անհրաժեշտ են շարունակելու հետագա ուսումը՝ ինքնուրույնության բարձր աստիճանով:

**Որակավորումներ/ մագիստրոսի, որոնք նշում են երկրորդ փուլի ավարտը, շնորհվում են այն ուսանողներին, ովքեր**

- Դրսևորել են գիտելիք և պատկերացում, որոնք հիմնվում են բակալավրի աստիճանի վրա և սովորաբար ընդլայնվում և/կամ կատարելագործվում է՝ կապված դրա հետ, և որոնք հիմք են ծառայում կամ հնարավորություն են տալիս ինքնատիպ լինելու՝ գաղափարներ մշակելիս կամ կիրառելիս , հաճախ որևէ գիտահետազոտական աշխատանքի համատեքստում,
- Կարող են իրենց գիտելիքն ու պատկերացումը, ինչպես նաև խնդիր լուծելու ունակությունները կիրառել նոր կամ անձանոթ միջավայրերում իրենց ուսման բնագավառին առնչվող ավելի լայն (կամ բազմառարկայական ) համատեքստերում,

- Ունեն ունակություն, որը թույլ է տալիս գիտելիքն ինտեգրել ու հաղթահարել բարդ իրավիճակները, ինչպես նաև ձևակերպել դատողություններ, որոնք հիմնվում են ոչ լրիվ կամ սահմանափակ տեղեկությունների վրա, սակայն ձևավորվում են սոցիալական և բարոյական պատասխանատվության շուրջ մտորումների արդյունքում՝ կապված իրենց գիտելիքի և դատողությունների կիրառման հետ,
- Կարող են հաղորդել իրենց եզրակացությունները և դրանց համար հիմք հանդիսացող գիտելիքն ու տրամաբանական կառուցվածքը մասնագետ և ոչ մասնագետ լսարանին հստակորեն և միանշանակորեն,
- Ունեն սովորելու հմտություններ, որոնք թույլ են տալիս ուսումնառությունը շարունակել ինքնուրույն կամ անկախ:

### **Որակավորումներ/ դոկտորի, որոնք նշում են երրորդ փուլի ավարտը, շնորհվում են այն ուսանողներին, ովքեր**


- Դրսևորել են ուսումնառության որևէ ոլորտի մասին սիստեմատիկ պատկերացում և ձեռք են բերել այդ ոլորտի հետ կապված հմտություններ ու գիտահետազոտական մեթոդներ,
- Դրսևորել են հետազոտության իրական գործընթացը գիտական հստակությամբ նախաձեռնելու, մշակելու, կիրառելու և տեղայնացնելու ունակություն,
- Իրենց մասնաբաժին են ներդրել գիտելիքի սահմաններն ընդլայնող ինքնատիպ հետազոտության միջոցով, մշակելով զգալի նյութեր, որոնց մի մասը հրապարակվել է երկրում ու դրա սահմաններից դուրս,
- Ի վիճակի են քննադատական վերլուծության ենթարկել, գնահատել և սինթեզել նոր և բարդ գաղափարներ,
- Կարող են հաղորդակցվել իրենց գործընկերների, ավելի լայն գիտական համայնքի և ընդհանուր առմամբ հասարակության հետ իրենց փորձառության բնագավառի շուրջ,
- Կարելի է ակնկալել, որ գիտելիքի վրա հիմնված հասարակության մեջ ուսումնական և մասնագիտական շրջանակներում կարող են խթանել տեխնոլոգիական, սոցիալական և մշակութային առաջընթացը:

Բյուրմի<sup>1</sup> կողմից առաջ քաշած մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս ձևավորել չափելի վերջնարդյունքներ: Կրթական վերջնարդյունքների նկարագրության չափելիությունն ապահովող Բյուրմի տաքսոնոմիան ունի հետևյալ

---

<sup>1</sup> Բյուրմի տաքսոնոմիան և կրթական վերջնարդյունքները, <http://herearmenia.wordpress.com/2011/06/01/բյուրմի-տաքսոնոմիան-և-կրթական-վերջնա/>

կառուցվածքը, որտեղ դասախոսների կամ ուսումնական գործընթացի այլ պատասխանատուների համար պարզ ներկայացված է, թե ինչպես կարելի է խուսափել օգտագործել այնպիսի բառեր, ինչպիսիք են օրինակ ընկալելը, գնահատելը, այլ դրանց փոխարեն հստակ սահմանել այդ վերացարկված սահմանումների առարկայական տարբերակները, որոնց չափագրումը խնդիրներ չի առաջացնում: Բլյումի տաքսոնոմիան դասակարգում է կրթական վերջնարդյունքները: Այն առաջարկվել է համանուն հեղինակի կողմից 1956 թվականին:



Բլյումի տաքսոնոմիական կառուցվածքը	Նկարագրող բառեր
<p><b>Գնահատում</b></p> <p><i>Գիտելիքի մասին դատողություններ անել</i></p>	<p>Մեկնաբանել, հիմնավորել, որոշել, քննադատել, դատողություն անել, լուծել, ռեյտինգավորել, արժևորել, գնահատական տալ</p>
<p><b>Համադրում</b></p> <p><i>Ստեղծել նոր գաղափարներ կամ առարկաներ</i></p>	<p>Առաջադրել թեզ, կանխատեսել, ստեղծել, արտադրել, մոդիֆիկացնել, ընդլայնել, նախագծել, ձևակերպել, մշակել, կառուցել, համադրել</p>
<p><b>Վերլուծություն</b></p>	<p>Ուսումնասիրել, միավորել, տարանջատել,</p>

<i>Տեղեկատվությունը մասերի բաժանել</i>	դասակարգել, հայտնաբերել, զննել, ուսումնասիրել, տարբերակել, մասերի բաժանել, ընդհանրացնել, համեմատել, վերլուծել
<b>Կիրառություն</b> <i>Տեղեկատվությունը գործածել, գործադրել, կիրառել</i>	Փորձել, դիագրամ կառուցել, կատարել, գրաֆիկներ կառուցել, գործողությունների վերածել, կառուցել, զեկուցել, կիրառել, կիրառական համեմատություն անել, կիրառությունից հետևություն անել, տարբերը իրար հետ համադրել, հարմարեցնել
<b>Ընկալում</b> <i>Տեղեկատվությունը հասկանալ</i>	Հանրագումարել, համեմատել, փորձարկել, տարրական զուգահեռներ տանել, ցուցադրել, բացատրել, վերաձևակերպել, քննարկել
<b>Գիտելիք</b> <i>Տեղեկատվությունը գտնել կամ հիշել</i>	Պատմել, ցուցադրել, թվարկել, տեղադրել, կրկնել, սահմանել, բացատրել, քննել, մտաբերել, անվանել, ցույց տալ

Կրթության տարբեր մակարդակներում տարբեր համադրությամբ կրթական ծրագրերի պահանջարկ ու անհրաժեշտություն է գոյացնում: Այդ անցումը Բլյումի դասակարգման մեջ տրված է հետևյալ կառուցվածքով՝

<b>Higher Oder Thinking Skills</b>	<b>Բարձրակարգ մտածողություն</b>	<b>Սահմանում</b>
<b>Evaluation</b>	<b>Գնահատում</b>	Արժեքի, օգտակարության համակարգված սահմանումը, չափորոշիչների կիրառությամբ կարևորության ու արժևորվածության աստիճանի որոշումը:
<b>Synthesis</b>	<b>Համադրում</b>	Պարզ բաղկացուցիչների ու տարրերի համադրումը: Ընդհանուրից կիրառական օրինակների դուրսբերումը: Թեզի և հակաթեզի համադրումը: Մեկնաբանելու նպատակով վերլուծվող տեղեկատվության համապատասխան համադրումը այլ տվյալների ու տեղեկատվության հետ:
<b>Analysis</b>	<b>Վերլուծություն</b>	Հետևությունների ու բաղկացուցիչ տարրերի մասնաբաժանման միջոցով բնույթի, էության, ֆունկցիայի ուսումնասիրություն: Ապացուցված ճշմարտություններից դուրս բերել ապացույցը: Բովանդակության բաղկացուցիչ տարրերի առանձնացումը
<b>Application</b>	<b>Կիրառություն</b>	Միջոցների կիրառություն որոշակի նպատակին

		հասնելու համար, կոնկրետ կիրառություն
<b>Comprehension/ Understanding</b>	<b>Ընկալում /նկարագրել ու բացատրել/</b>	Մտագործունեական /հոգեբանական/ գործընթաց է, որը վերաբերվում է վերացարկված կամ գոյական առարկային, ինչպես օրինակ անհատը, իրավիճակը, պատգամը, որի վերաբերյալ մարդը կարող է մտածել ու գործածելով համարժեք հասկացություններ կարող է առարկայի վերաբերյալ ձևավորվել համարժեք վերաբերմունք
<b>Knowledge</b>	<b>Գիտելիք /հիշել, մտաբերել/</b>	ա)փորձագիտություն, որը գոյացել է փորձառության ու կրթության միջոցով և տվյալ առարկայի տեսական ու գործնական ընկալումն է, բ)տվյալ ոլորտում կամ ընդհանրապես ճանաչելին ու գիտակցվածը; փաստեր ու տեղեկատվություն կամ գ)փաստի կամ իրավիճակի դիտարկմամբ պայմանավորված

Հիմք ընդունելով այն փաստը, որ ԱՐՄԵՆՔԱ ՏԵՄՊՈՒՍ ծրագրի շրջանակներում մշակվել է ՀՀ ՈԱՇ-ը, որն իր մեջ արդեն ներառում է Դուբլինյան նկարագրիչները, ապա կարելի է ուղղորդվել միայն նրանով: օրինակ բակալավրինը, ամբողջը տես հավելված:

Բակալավր որակավորման նկարագիրը	Բակալավրի աստիճան է շնորհվում անձանց, ովքեր ունեն համակողմանի և համակարգված գիտելիքներ և կարողություններ՝ մի շարք ոլորտներում մասնագիտական աշխատանք կատարելու և/կամ ուսումը շարունակելու համար
5. ինքնուրույնություն և պատասխանատվություն (ներառյալ սովորելու կարողությունները)	Ունակ է համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու գործունեություն և կատարելու առաջադրանքներ ուսումնառության ընթացքում և/կամ աշխատանքում, ցուցաբերելու որոշակի ինքնուրույնություն որոշումներ կայացնելիս, ինչպես նաև՝ պատասխանատվություն ստանձնելիս: Ունակ է որոշակի ուղղորդման պայմաններում բացահայտելու իր սեփական կրթական պահանջմունքները ինքնուրույն որոշում կայացնելու՝ իր հետագա ուսումնառությունը տարբեր միջավայրերում շարունակելու համար:
4. Ընդհանրական	Կարող է կիրառել քննադատական մտածողություն,

<p>իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը)</p>	<p>վերլուծել և եզրահանգումներ անել, ինչպես նաև ցուցաբերել որոշակի ստեղծագործական մոտեցում՝ ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջարկելու համար</p>
<p>3. Հաղորդակցման, S2S և տվյալների հետ աշխատելու կարողություններ</p>	<p>Կարող է մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը բացատրել և ներկայացնել տվյալ ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստարկներ և լուծումներ:</p> <p>Կարող է կիրառել S2S-ներ իր մասնագիտական ոլորտում աշխատանքը դյուրացնելու և արագացնելու ու խնդիրներ լուծելու համար:</p> <p>Կարող է հավաքագրել, մշակել և մեկնաբանել ոլորտին առնչվող քանակական և որակական տվյալներ՝ հիմնավորված դատողություններ անելու համար:</p>
<p>2. Գիտելիքի և իմացության կիրառումը</p>	<p>Կարող է կիրառել ոլորտի հիմնարար սկզբունքները և մեթոդները՝ ծանոթ իրադրություններում մասնագիտության բնորոշ խնդիրների լուծման համար:</p>
<p>1. Գիտելիք և իմացություն</p>	<p>Դրսևորում է ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների վերաբերյալ ընդհանուր գիտելիք և իմացություն</p>

**I օրինակ- Համակարգչային Ինժեներիայի առաջին փուլի աստիճանաշնորհ/բակալավր/ ծրագրի նկարագրությունն ու Ֆիզիկայի դասընթացի ուսումնառության վերջնարդյունքները**

**Առանցքային Ուսումնառության վերջնարդյունքները**

Համակարգչային ինժեներիայի բակալավրիատի շրջանավարտը պետք է կարողանա ծրագրավորել, տեղադրել և պահպանել համակարգչային սիստեմներ և ցանցեր, համակարգչային ծրագրերի միջոցներ, ինդուստրիալ ինքնավարության համակարգեր, տեղեկատվության կառավարման համակարգեր, ինտեգրված վերամշակումների և վերահսկման համակարգեր:

**2 օրինակ Առանցքային Ուսումնառության Վերջնարդյունքները**

Պատմության ֆակուլտետի բակալավրիատի շրջանավարտը պետք է կարողանա ցուցաբերել անցյալի և ներկայի հարաբերությունների քննադատական ըմբռնում, պատմական հետազոտությունների հիմնարար տեխնիկայի կիրառման գիտելիքներ և կարողություններ, համապատասխան գիտական գրականության, մատենագրության և պատմաժամանակագրական խնդիրներին անդրադարձող աղբյուրների տարբերակման կարողություններ, ըստ թիրախային խմբերի՝ հետազոտության արդյունքները տարբեր ձևերով հաղորդակցելու կարողություններ, այլ հասարակական և հումանիստական գիտությունների, ինչպես նաև պատմության գլխավոր գործիքների կիրառման գիտելիքներ և կարողություններ, մարդկային պատմության հիմնական էտապների հիմնարար գիտելիքներ, պատմության առանձին ծավալուն ժամանակաշրջանի ավելի մասնագիտացված

գիտելիքներ(Հնագույն պատմություն, Միջին Դարերի Պատմություն, Նորագույն/Ժամանակակից պատմություն), Բացի Բտալերեն/հայերենից առնվազն մեկ այլ ԵՄ լեզվով հաղորդակցվելու կարողություն, Հաղորդակցման համար հիմնարար տեղեկատվական և հաղորդակցական կարողություններ, պատմաժամանակագրական տեքստերի և տվյալների վերականգնման և վերամշակման կարողություններ:

**III օրինակ- Շուկայաբանական Վերլուծություններ Մագիստրոսական ծրագրի/ստսիճանաշնորհ ծրագրի երկրորդ փուլ/ ուսումնառության վերջնարդյունքների նկարագրությունը**

Ուսումնառության վերջնարդյունքներ 1: Շուկայաբանական վերլուծությունների կոմպետենցիաները

ՈւՎ 1.1 Բարդ շուկայաբանական որոշումների մոդելների մշակում՝ հիմնված սպառողի հարաբերությունների կառավարման տեսությունների վրա:

ՈւՎ 1.2 Շուկայաբանական որոշումների համակարգերի ինտեգրումը իրականության ոլորտում գործող ընկերությունների շրջանակում:

ՈւՎ 1.3 Բիզնեսի հետ կապված հիմնախնդիրների ինքնուրույն և քննադատական վերլուծություններ՝ տվյալների հայթայթման և ինֆորմատիկայի միջոցով:

ՈւՎ 1.4 Տվյալների ձեռքբերման ժամանակակից տեխնիկայի ստեղծագործական կիրառություն բիզնեսի հետ կապված հիմնախնդիրներում:

ՈւՎ 1.5 Ժամանակակից առաջադեմ շուկայաբանական հետազոտական մեթոդների ստեղծագործական կիրառություն բիզնեսի հետ կապված հիմնախնդիրներում

Ուսումնառության վերջնարդյունքներ 2: Հետազոտական կոմպետենցիաներ

ՈւՎ 2.1 Տվյալների ձեռքբերման և վիճակագրական տեխնիկայի սելեկցիա և հաստատում՝ օպտիմալ ձևով բարդ շուկայաբանական խնդիրների մոդելավորման համար:

ՈւՎ 2.2 Բարդ շուկայաբանական խնդիրների վերարտադրումը գիտական հետազոտական հարցերով:

ՈւՎ 2.3 Միջազգային, գրախոսված ամսագրերում ուսումնասիրված գրականության կիրառումը բարդ մարքեթինգային խնդիրներում:

ՈւՎ 2.4 Սեփական հետազոտության արդյունքների ստուգումը գիտական շուկայաբանական գրականության հետ:



ՈւՎ 2.5 Կոմպլեքս տվյալների կառուցվածքի լծակավորում

Ուսումնառության վերջնարդյունքներ 3: Ինտելեկտուալ կոմպետենցիաներ

ՈւՎ 3.1 Տարբեր ծրագրավորման լեզուների և համակարգչային ծրագրերի գործիքների տիրապետումը որպես բարդ շուկայաբանական որոշումների մոդուլների ստեղծման միջոց:

ՈւՎ 3.2 Սեփական մեթոդոլոգիական կոմպետենցիաների շարունակական ինտերակտիվ ընդլայնում:

ՈւՎ 3.3 Ինքնուրույն ճիշտ եզրակացությունների հանգում բարդ շուկայաբանական պրոբլեմներում :

ՈւՎ 3.4 Տարբեր շահառուների մրցակցային տեսակետների ինտեգրումը միասնական շուկայաբանական խնդիրների լուծումներում:

Ուսումնառության վերջնարդյունք 4: Համագործակցության և հաղորդակցման կոմպետենցիաներ

ՈւՎ 4.1 Սեփական շուկայաբանական հետազոտությունների համապատասխան արդյունքների գիտականորեն ճիշտ զեկուցում:

ՈւՎ 4.2 Իրագործել իրական բիզնես նախագիծ միջազգային և միջառարկայական խմբերում՝ փորձի տարբեր մակարդակներով:

ՈւՎ 4.3 Բարդ շուկայաբանական խնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ մասնագիտական գրավոր զեկույցի պատրաստում

ՈւՎ 4.4 Բարդ շուկայաբանական խնդիրների և դրանց լուծման վերաբերյալ մասնագիտական բանավոր զեկույցի կատարում

ՈւՎ 4.5 Շուկայաբանական խնդիրների լուծումների անզլերեն հաղորդակցումը մասնագետներին և ոչ մասնագետներին

ՈւՎ 4.6 Էական ներդրումներ իրական բիզնես նախագծերում

Ուսումնառության վերջնարդյունք 5: Հասարակական կոմպետենցիաներ

ՈւՎ 5.1 Նոր զարգացումների հետևանքների ինտեգրումը տվյալների հավաքագրման մեջ:

ՈւՎ 5.2 Որոշման մոդելների համապատասխանեցումը խոչընդոտներին և բիզնես նպատակներին

**Օրնակ 4**

## **Առանցքային ուսումնառության վերջնարդյունքները**

Ծրագրում սահմանված են հետևյալ ուսումնառության վերջնարդյունքները.

1. Տնտեսական զարգացման օրինաչափությունների ըմբռնման, ազգային տնտեսության և դրանց բացատրման, կարևոր քննարկումների մասնակցության և ըստ փոփոխվող հանգամանքների՝ որոշումներ կայացնելու կարողություններ:
2. Ձեռնարկատիրության կառավարման մեջ ձեռքբերված գիտելիքները ըստ սահմանված կազմակերպչական և ռազմավարական նպատակների կիրառման, իրականացման գործընթացների հսկման և կազմակերպչական ու ռազմավարական գործունեությունների համար որոշումներ կայացնելու և ճշգրտումներ մտցնելու կարողություններ:
3. Մասնագիտական գործընթացներ իրականացնելու, գիտական մոտեցման կիրառմամբ իրենց մասնագիտության մեջ տեղեկատվության և պրոբլեմների ձևակերպման և վերլուծման, ինչպես նաև լուծումներ տալու կարողություններ:
4. Շրջակա միջավայրի և հասարակության վրա մասնագիտական ազդեցության համար էթիկորեն գործելու և պատասխանատվությունների ըմբռնման կարողություններ:
5. Պարտականությունների ստանձնման կարողություններ, թիմում աշխատելու կարողություններ, պարտականությունների լիազորման և համակարգման, նրանց աշխատանքը արդյունավետ ձևով պլանավորելու և կազմակերպելու, ինչպես նաև կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարման կարողություններ:

## ***Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը***

Ուսումնառության վերջնարդյունքների ձևավորմանը հետևում է դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը, քանի որ ուսումնառության վերջնարդյունքը հաջողությամբ ձեռք բերելու համար հարկավոր է դիտարկել, թե ուսումնառության ինչպիսի ձևեր պետք է ընտրել: Ուսումնառության ձևերի ընտրությունից բխում է դասավանդման մեթոդների ընտրությունը, որոնք առավելապես կնպաստեն և կօժանդակեն դրանց հաջող իրականացմանը: Դասավանդման դերը այնպիսի ուսումնական միջավայրի ստեղծումն է, որտեղ ուսանողները հաջողությամբ ձեռք կբերեն ակնկալվող գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է.

- Լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքներով ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից:
- Հաշվի առնեն ուսանողների գիտելիքների ու ընդունակությունների տարբեր մակարդակները և լինեն բազմաձև:
- Խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ՝ որտեղ դա պետք է:

### ***Գնահատման մեթոդների ընտրությունը***

Ուսումնառության վերջնարդյունքների ձեռք բերումը գնահատելու (ուսումնառության գնահատում – assessment of learning), ինչպես նաև դրանց ձեռք բերմանը նպաստելը հետադարձ կապի միջոցով (գնահատում ուսումնառության նպատակով – assessment for learning):

Գնահատման մեթոդները ընտրվում են հետևյալ սկզբունքով. ինչպես կարելի է ստուգել ուսանողը հասել այս կամ այն վերջնարդյունքին: ՄԿԾ-ի վերջնարդյունքների ձեռքբերումը ստուգվում են ավարտական ատեստացիաների ժամանակ: ՄԿԾ պատասխանատուները մանրամասն պետք է սահմանեն ինչպես և ինչն են գնահատելու ատեստավորումների ժամանակ, ձևավորեն գնահատման ռուբրիկը:

### ***ՄԿԾ-ի համար ուսումնառության ռեսուրսների սահմանում***

Ցանկացած ՄԿԾ հաջող իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ: Պետք է հիշել, որ ռեսուրսների որակը անմիջականորեն ազդում է ծրագրի որակի վրա: Կարևորագույն ռեսուրս են հանդիսանում համապատասխան ոլորտի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի առկայությունը, ուսումնական ենթակառուցվածքները, ուսումնական և հետազոտական գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան: Ռեսուրսների այս երկու տեսակներն էլ ենթակա են անընդհատ հաշվառման և կառարելագործման:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնասովանկողակ անձնակազմ – ՄԿԾ-ի մեջ հստակ պետք է սահմանվեն տվյալ ծրագրի համար ինչպիսի մասնագետների կարիք ունի և հիմնավորի տվյալ մասնագետների ապահովվածությունը հաջողությամբ ՄԿԾ-ն իրականացնելու համար:

Ուսումնամեթոդական նյութեր – ՄԿԾ- ի մեջ պետք է ներկայացվեն դասընթացների անցկացման համար անհրաժեշտ հիմնական դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ցանկը:

Տեխնիկական միջոցներ – ներառում է տեղեկատվության տեխնիկական միջոցները և տեսաձայնային սարքավորումները, լաբորատոր սարքավորումները, տեսապաստառները և այլն:

Ուսումնական տարածքներ – ծրագրի իրականացման բոլոր փուլերում ուսանողներին պետք է հատկացվեն համարժեք լսարանային/ուսումնական տարածքներ: Դասախոսություններին պատրաստվելու և ուսանողների հետ հանդիպելու համար դասախոսներին նույնպես անհրաժեշտ է ապահովել համապատասխան տարածքներով:

Արտադրական պրակտիկայի կազմակերպում և ղեկավարում – ՄԿԾ-ով սահմանվում են նաև մասնագիտական մի շարք կարողությունների ձևավորման և հմտությունների զարգացման կարևորագույն ծրագրային բաղադրիչ համարվող արտադրական պրակտիկաները, որոնք պետք է իրականացվեն պատշաճ մակարդակով:

### ***Ուսումնական պլանը արտահայտված կրեդիտներով և առարկայական ցանկը***

ՄԿԾ փաթեթի կարևոր մաս են կազմում առարկայական նկարագրիչները և ուսումնական պլանը արտահայտված կրեդիտներով: Դրա համար ՄԿԾ-ի պատասխանատուն և նրա խումբը պետք է ուսումնական պլանող նախատեսված առարկաները դասավանդող ամբիոններից պահանջեն տվյալ ՄԿԾ-ի համար առարկայի բնութագրիչները:

Հետագայում ըստ թյունինգի մեթոդաբանության պետք է իրականացվի ստուգում արդյոք առարկայական ծրագրով պլանավորված վերջնարդյունքների գումարը ապահովվում է ՄԿԾ-ի վերջնարդյունքների ձեռքբերումը:

## **Թյունինգի մեթոդաբանություն**

**Ինչ է Թյունինգի մեթոդաբանությունը՝** այն ստեղծվել է որպեսզի կրթական ծրագիրը դարձնա հասկանալի և համադրելի: Այս մեթոդաբանության կարգախոսն է “Կառուցել կրթական կառուցվածքները և ծրագրերը տարբերության և ինքնավարության սկզբունքի վրա”:

Թյունինգի մեթոդաբանության մեջ կրթական ծրագիրը հասկանալի և համադրելի դարձնելու համար առանձնացվել է հիմք մոտեցումներ: Դրանք են՝

1. Ընդհանուր կոմպետենցիաները (վերջնարդյունքները)
2. Առարկայական վերջնարդյունքները
3. ECTS – ի դերը որպես կուտակող համակարգ
4. Դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացներում որդեգրված մոտեցումները
5. Կրթական գործընթացում որակի ապահովման և բարձրացման համակարգը (ընդգծելով բուհում առկա ինստիտուցիոնալ որակի մշակույթը):

Թյունինգի մեթոդաբանության շրջանակում առաջարկվում է մշակել, նախագծել, իրականացնել ուսումնական ծրագրեր, ինչպես կոնկրետ հաստատության/բուհի համար, այնպես էլ համատեղ, երկու կամ ավելի հաստատությունների/բուհերի համար: Ուսումնական ծրագրի (տեղական ծրագիր կամ (միջազգային) ինտեգրված ծրագիր/ համատեղ աստիճանի շնորհման համար) նախագծման համար առաջարկվում է հետևյալ հիմնական քայլերը.

1. Բոլոր կրթական ծրագրերի համար այս պայմանները նույն են՝

- Բացահայտել տարածաշրջանային/ ազգային/ Եվրոպական մակարդակով տվյալ ծրագրի հասարակական անհրաժեշտությունը: Այդ տեղեկության բացահայտման համար անհրաժեշտ է խորհրդակցել շահառուների հետ գործատու, տվյալ ոլորտի մասնագետների և մասնագիտական խորհուրդների հետ:
- Գիտական տեսանկյունից ծրագիրը հետաքրքրություն ներկայացնում է թե ոչ:
- Տվյալ ծրագրի իրականացնելու համար բուհը իր ներսում ունի բավարար ռեսուրսներ, թե նա այդ ռեսուրսների պակասը լրացնելու է իր գործընկերների միջոցով:  
Միջազգային ծրագրերի համար, որոնք իրականացվելու են մեկից ավելի հաստատություն
- Առկա է արդյոք համաձայնություն հաստատությունների միջև
- Արդյոք կա վստահություն, որ տվյալ ծրագիրը կընդունվի իրավաբանորեն տարբեր երկրների կողմից:
- Առկա է արդյոք համաձայնություն, որքան է տևելու ծրագիրը այն հաստատությունների միջև (հիմնված ECST կուտակման համարագի և ուսանողների ծանրաբեռնվածության վրա):
  2. Տվյալ աստիճանի պրոֆիլի սահմանումը
  3. Տվյալ ծրագրի նպատակների և վերջնարդյունքների (կոմպետենցիաների՝ գիտելիք կարողություն և հմտություն) նկարագրություն, որի ձեռք բերման է ուղղված այս ծրագիրը:
  4. Ընդհանուր և առարկայական կոմպետենցիաների սահմանումը, որոնք պետք է ձեռք բերվեն կրթական ծրագրի իրականացման արդյունքում:
  5. Ուսումնական պլան, որտեղ նշված է կրթական ծրագրի կառուցվածքը՝ կրեդիտները և մոդուլները:
  6. Կրթական կոնկրետ կոմպետենցիաների ձեռք բերման ընթացքի նկարագրություն/քարտեզագրում
  7. Դասավանդման, ուսումնառության մեթոդների, տեխնիկայի և ձևերի ընտրություն ինչպես նաև գնահատման մեթոդների որոշումը:
  8. Կրթական ծրագրի որակի գնահատման գործիքների ստեղծում:

Թյունինգի մեթոդաբանությունը փաստում է, որ կոմպետենցիաները կարելի է առանձնացնել երկու սկզբունքով՝ ընդհանուր և առարկայական-մասնագիտական: Չնայած առաջնայնությունը տրվում է միշտ մասնագիտական կոմպետենցիաներին, այնուամենայնիվ ընդհանուր կոմպետենցիաների ձեռք բերումը նույնպես շատ

կարևոր են, քանի որ վերջիններս ուղղված են շրջանավարտին իր ապագա հասարակական դերակատարմանը որպես աշխատակից, քաղաքացի:

Առանձնացվում են երեք տիպի ընդհանուր կոմպետենցիաներ՝

1. Գործիքային կոմպետենցիաներ՝ ճանաչողական կարողությունների, մեթոդաբանական կարողությունների, տեխնոլոգիական ունակությունների և լեզվական կարողությունների ձևավորում:
2. Միջանձնային շփման կոմպետենցիաներ՝ անհատական կարողությունները որպես հասարակական միջավայրում դրսևորվելու հմտություններ (սոցիալական փոխազդեցության և համագործակցության)
3. Համակարգային կոմպետենցիաներ: Համակարգված մտածողության կարողություններ և հմտություններ (փոխըմբռնման, զգայունակության և գիտելիքների համադրում, միջանձնային շփման հմտություններ):

Թյունինգի մեթոդաբանությունը պահանջում է լայնածավալ քննարկումներ շահակիցների՝ շրջանավարտների, գործատուների և գիտնականների հետ, տվյալ կրթական ծրագրի հիմնական կոմպետենցիաների բացահայտելու համար: Մակայն ընդհանուր կոմպետենցիաներին միշտ գերակշռող ծրագրերում առանձնացվում է **վերլուծելու և համադրելու կարողությունը, ինչպես նաև խնդիրներ լուծելու և ինքնուրույն սովորել կարողանալու հմտությունները:** Սովորաբար որպես ընդհանուր հմտություններ որպես կանոն մատնանշվում են նաև հետևյալ հմտությունները. միջավայրում արագ ադապտացվելու, պրակտիկայում տեսությունը կիրառելու, տեղեկությունը կիրառելու հմտությունը, ինչպես խմբում, այնպես էլ ինքնուրույն աշխատելու հմտությունը, պլանավորելու և կազմակերպելու հատկությունները և այլն:

Այսպիսով, կոմպետենցիաների երկու մակարդակ առանձնացնելով հնարավոր է դուրս բերել, թե որ առարկաներն են դրանց ձեռք բերման համար պատասխանատու: Հաճախ ձևավորելով նաև մոդուլներ:

Ըստ Թյունինգի մեթոդով առաջարկվող աղյուսակի առարկայական ծրագրի վերջնարդյունքները և ՄԿԾ վերջնարդյունքները համադրվում են ինչը հնարավորություն է տալիս ՄԿԾ պատասխանատուներին ստուգել արդյոք առարկայական վերջնարդյունքները համադրելի են ՄԿԾ վերջնարդյունքներին:

Մեկից հինգ բալային համակարգով կարելի է չափել առարկայի վերջնարդյունքը, որքանով է փակում ՄԿԾ տվյալ վերջնարդյունքը: Եթե միայն այդ առարկա պետք է ապահովվի տվյալ վերնարդյունքը, սովորաբար այդպես չի լինում, առարկաների համախումբն է փակում ՄԿԾ-ի այս կամ այն վերջնարդյունքը, ապա այն նշանակվում է 5, եթե այն մասամբ է փակում, ապա ՄԿԾ պատասխանատուները պետք է գնահատեն վերջնարդյունքի որքան մասն է այն ապահովում է: Այս գնահատման միամակարգը հնարավորություն է տալիս բացահայտել արդյոք կրեդիտների հատկացումը այդ առարկային ճիշտ է սահմանված:

Այս մեթոդաբանության շնորհիվ բացահայտվում են նաև այն առարկաները, որոնց վերջնարդյունքները ուղղված չեն ՄԿԾ-ի վերջնարդյունքների ձեռքբերմանը և ՄԿԾ պատասխանատուի ուղղորդմամբ դրանք վերանայվում են: Այս մեթոդանաբությունը հնարավորություն է տալիս ճշտելու արդյոք բոլոր վերջնարդյունքներն են առարկաները ապահովում: Ըստ տրված օրինակի վերջնարդյունք 6-ում առկա է միայն 0, ինչը նշանակում է, որ պետք է բացահայտվի, որ առարկան/ները պետք է այդ վերջնարդյունքը ապահովեր, որ չի ապահովել և կրկին ուղղորդվումն է:

	Վերջնարդյունք 1	Վերջնարդյունք 2	Վերջնարդյունք 3	Վերջնարդյունք 4	Վերջնարդյունք 5	Վերջնարդյունք 6
Առարկա 1	2	0	0	0	1	0
Առարկա 2	0	2	1	1	0	0
Առարկա 3	0	1	0	1	1	0
Առարկա	2	1	0	0	0	0



4						
Առարկա	0	0	0	0	1	0
5						

***ՄԿԾ-ի միջազգայնացումը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցումը***

Բենչմարքինգը տվյալների հավաքման և ներկայացման ստանդարտացված մեթոդ է, որը հնարավորություն է կտա համադրել տարբեր բուհերի նմանատիպ կրթական ծրագրերի արդյունավետությունը, որոշել լավագույն փորձը, ժամանակին ախտորոշել խնդիրները, հայտնաբերել ուժեղ կողմերը: Այն նաև որակը սահմանելու միջոց է:

ՄԿԾ-ի պատասխանատունը իր խմբի հետ ՄԿԾ-ի միջազգայնացման և ուսանողների և դասախոսական կազմի շարժունությունն ապահովելու համար պետք է իրականացնի ՄԿԾ-ի բենչմարքինգ նմանատիպ միջազգային այլ ծրագրերի հետ՝ ձգտելով ապահովել համադրելիություն:

Ինչպիսի անմիջական արդյունքներ կարելի է ակնկալել բենչմարքինգից՝

- Վերլուծվում է ՄԿԾ-ների իրականացման գործընթացը
- Համեմատվում են տարբեր բուհերի (տարբեր երկրների) ՄԿԾ-ներ
- Բացահայտվում են ձեռքբերումներն ու թերացումները
- Գնահատվում են այլընտրանքային լուծումները

Ինչպիսի անուղղակի արդյունքներ կարելի է ակնկալել բենչմարքինգից՝

- Ակնհայտ է դարձնում իրականացման գործընթացի համապատասխանությունը պլանավորվածին
- Կանխորոշվում են ՄԿԾ-ի համադրելի դարձնելու եզրերը

Բենչմարքինգի իրականացման համար պետք է պահպանել հետևյալ սկզբունքները՝

- Փոխհամաձայնություն: Բենչմարքինգ իրականացնելու համար այլ բուհից պետք է ձեռք բերել համաձայնության, որը կդարձնի գործընթացը օրինական և տրամադրվող տեղեկատվության սահմանները կլինեն խորը և չափելի, և չի խախտվի գրագործության/հեղինակային ոչ մի կանոն (անհրաժեշտ է միշտ կատարել գիտումներ, որ տեղեկությունը որտեղից է ձեռք բերված):
- Նույնականություն: Համեմատվող ՄԿԾ-ների ոլորտները, որակավորումը և պրոֆիլը պետք է նույնը լինի:

- Չափում: Մի քանի բուհերի ՄԿԾ-ների արդյունքների չափման միջոցով լավագույն փորձի հայտնաբերում:
- Հավաստիություն: Բենչմաշքինը պետք է հիմնվի փաստերի, կոնկրետ վերլուծությունների վրա:

Բենչմաշքինգի մեթոդաբանությունը՝

Բենչմաշքինգի փուլերն են՝

Պլանավորում	Փնտրտուք	Վերլուծություն	Աղապտացում
1. որոշել վերլուծության առարկան, նպատակները, չափանիշները, 2. գտնել գործընկերներ, 3. մշակել բենչմաշքինգի պլան, 4. կազմել բենչմաշքինգ անող թիվը,	1. հավաքել տեղեկատվություն, 2. գործընկերների հետ համաձայնության գալ և եթե անհրաժեշտ է կազմել բենչմաշքինգի արձանագրություն, 3. պատրաստել հարցաշար, հստակեցնել հասկացությունները, բաժանել հարցաշարերը գործընկերներին,	1. Տվյալները վերլուծելիս կազմել աղյուսակներ, դիագրամներ 2. Համեմատվել առաջավոր փորձի հետ և հայտնաբերել ձեր ՄԿԾ-ի բացթողումները 3. Գտնել պատճառները 4. Քննարկել տվյալները 5. Գնահատել բարելավման հնարավորությունները 6. Կատարել SWOT վերլուծություն, առանձնացնել դրական փորձը և բարելավման հնարավորությունները	1. Քննարկել բարելավման հնարավորությունները 2. Ընտրել այն ոլորտները, որտեղ բարելավումը հնարավոր է 3. Պատրաստել հաշվետվություն՝ ներառելով առաջարկություններ 4. Ստանալ բուհի ղեկավարության համաձայնությունը բարեփոխումներ իրականացնելու համար 5. Մշակել առաջավոր պրակտիկաների ներդրման համար պլան-ժամանակացույց 6. Հետևել բարեփոխումների ընթացքին 7. Խրախուսել հաջողությունները 8. Տեղեկացնել նախագծի մասնակիցներին ձեռքբերումների մասին

Այս փուլերը ներկայացնում են բենչմաշքինգի անիվը, որը գործում է մշտադիտարկման պայմաններում:

Բենչմաշքինգի վերլուծության փուլից հետո SWOT անալիզի իրականացում

SWOT վերլուծությունը հնարավորություն կտա բացահայտել ՄԿԾ-ի ներքին ուժեղ և թույլ կողմերի ինչպես նաև արտաքին գործոնների՝ հնարավորությունների և վտանգների ուսումնասիրություն իրականացնել:

Արտաքին գործոնների՝ վտանգների և հնարավորությունների ընկալումը՝ զուգակցված ուժեղ և թույլ կողմերի ներքին ուսումնասիրությամբ, թույլ է կտա ՄԿԾ պատասխանատուներին ճիշտ գնահատել իրավիճակը և մշակել ՄԿԾ-ի բարեփոխման ուղիներ:

SWOT վերլուծությունը պետք է ներառի ՄԿԾ-ի բոլոր տարրերը, որոնցից յուրաքանչյուրը կարող է լինել ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների կամ վտանգների աղբյուր:

Վերլուծության ընթացքում անհրաժեշտ է դիտարկել հետևյալ տիրույթները:

Հաստատության ներքին միջավայր

դասախոսներ և աշխատակազմ

լսարաններ, լաբորատորիաներ և հարմարություններ (կրթական միջավայր)

ուսանողներ

ֆինանսական միջոցներ

Արտաքին միջավայր

հնարավոր գործատուներ (տվյալ ծրագրի առումով)

մրցակից գործընկերներ

գլոբալ զարգացումներ, աշխատաշուկայի տենդենցները

**Շահակիցների կարիքների վերհանում (Ինչպես կատարել  
աշխատաշուկայի վերլուծություն և ինչպես իրականացնել  
ուսումնասիրություն շրջանավարտների շրջանում)**

ՄԿԾ-ի ստեղծման կամ բարելավման պլանի մշակման համար առաջնային և անհրաժեշտ քայլերից է նաև շրջանավարտների և գործատուների շրջանում ուսումնասիրություն իրականացնելը:

ՀԱԱՀ ՄԿԾ-ի բարելավման և աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համադրելու համար անհրաժեշտ է ուսումնասիրություն իրականացնել գործատուների շրջանում և ՀԱԱՀ շրջանավարտների շրջանում:

Հետազոտությունը կարող է լինել ինչպես քանակական այնպես էլ որակական:

Որակական և քանակական հետազոտությունների տարբերությունը լուսաբանող

**ԱՂՅՈՒՍԱԿ**

<b>Որակական</b>	<b>Քանակական</b>
Ապահովում է հասկացման խորությունը	Չափում է տարածվածության մակարդակը
Հարցնում է “Ինչու”	Հարցնում է “Ինչքան”, “Ինչքան հաճախ”
Ուսումնասիրում է դրդապատճառները	Ուսումնասիրում է գործողությունները
Սուբյեկտիվ է	Օբյեկտիվ է
Կարող է բացահայտել	Ապահովում է ապացույցներ
Հետազոտական է	Նկարագրողական է
Հնարավորություն է տալիս թափանցել վարքի, միտումների և այլնի մեջ	Չափում է գործողությունների, միտումների և այլնի մակարդակը
Մեկնաբանում է	Նկարագրում է

Քանակական և որակական հետազոտությունները ունեն առավելություններ և սահմանափակումներ, ինչը պայմանավորում է դրանց զուգահեռ օգտագործումը: սոցիալական գիտություններում հիմնախնդիրների համապարփակ ուսումնասիրման նպատակով կիրառվում է *տրիանգուլացիայի մեթոդը*: Տրիանգուլացիայի մի քանի տեսակ գոյություն ունի՝ մեթոդների, աղբյուրների, հետազոտողների և տեսության տրիանգուլացիա: Հաճախակի կիրառվում է մեթոդների տրիանգուլացիան: Որակական հետազոտություններում տրիանգուլացիայի նպատակը հիմնախնդրի վերաբերյալ հավաստի, վստահելի տեղեկություն, արդյունք ստանալն է՝ տեղեկության ստացման մի քանի մեթոդների կիրառման միջոցով: Այսինքն՝ միաժամանակ օգտագործվում են տեղեկության ստացման մի քանի մեթոդներ՝ խմբային քննարկումներ, ձևայնացված հարցազրույցներ, դիտարկումներ, փաստաթղթերի վերլուծություն:

Ինչպես որակական, այնպես էլ քանակական հետազոտությունների արդյունավետության վրա ազդում է դրանց կիրառման նպատակահարմարության հիմնավորումը: Հիմնավորումը ուղղակիորեն կապված է այդ հետազոտությունները կիրառող անհատից, կազմակերպության նպատակներից, գործունեության ոլորտից:

Որակական հետազոտություններում առավել լայնորեն կիրառվում են **ֆոկլուս խմբային քննարկման և խորին հարցազրույցի մեթոդները**: Պատմականորեն որակական հետազոտությունները առաջացել են մի շարք դիսցիպլինաներից՝ **հասարակագիտություն, հոգեվերլուծական տեսություն, գրական քննադատություն**, որոնցից է եկել գաղափարներ, հասկացություններ մեկնաբանելու և համադրելու սկզբունքը: Այս մեթոդները կիրառվել են դրդապատճառներ ուսումնասիրելու նպատակով, հատկապես շուկայագիտության ոլորտում: Դրդապատճառների ուսումնասիրության անհրաժեշտությունը հանգեցրել է նրան, որ որակական հետազոտությունները շարունակում են կարևոր դեր խաղալ շուկայագիտության բնագավառում: Չնայած այս գնահատականին՝ կարևոր է գիտակցել որակական հետազոտության հիմքերը հասկանալու նպատակով այն նախադրյալները, որոնց վրա դրանք կառուցվում են: Եթե հետազոտողը չի կիրառում այս դիսցիպլինաներից որևէ ասպեկտ, ապա նա չի իրականացնում “ճշմարիտ” որակական հետազոտություն:

Կա որակական հետազոտության մեթոդները կիրառելու *կոնցեպտուալ և պրակտիկ* պատճառ: Նախ այն ապահովում է պատասխանների *խորությունը*, ի տարբերություն քանակական հետազոտությունների: Որակական հետազոտությունները նաև հնարավորություն են տալիս հետազոտության գործընթացում *կայացնել որոշումներ*: Ունենալով սուբյեկտիվ և բնագոյային տարրեր՝ հետազոտության նախնական փուլում այն կարող է կիրառվել հիմնախնդիրների և տեղեկատվական կարիքների սահմանման, վարկածների ձևավորման և փոփոխականների սահմանման նպատակով:

Քանակական հարցման համար անհրաժեշտ է առանձնացնել հնարավոր բոլոր գործատուներին, որոնց ուղղվելու է ստեղծված հարցաշարը, իսկ շրջանավարտների շրջանում անհրաժեշտ է իրականացնել հարցում պատահական ընտրանքի ձևով (քանի որ քանակը սովորաբար մեծ է լինում):

Սակայն նման հետազոտությունը ցանկալի է անցկացնել որակական բնույթի, քանի որ բովանդակային քննարկումը խիստ կարևոր է, այն կարող է լինել ինչպես ֆոկուս խմբի ձևով, այնպես էլ խորին կամ փորձագիտական հարցման սկզբունքներին համապատասխան:

## **Ֆոկուս խմբեր**

**Ֆոկուս խումբն** իրենից ներկայացնում է փոքր խմբով գրույց հետազոտողին հետաքրքրող թեմայի շուրջ՝ ըստ նախապես մշակված պլանի, հատուկ տարածքում անմիջական շփման միջոցով: Մեթոդին առավել մանրամասն կարող էք ծանոթանալ *“Ֆոկուս խմբային քննարկման մեթոդական ուղեցույցում”*:

## **Փորձագիտական հարցում**

Փորձագիտական հարցումը սոցիոլոգիական հարցման տեսակ է, որտեղ ռեսպոնդենտների դերում հանդես է գալիս մարդկանց հատուկ տիպ՝ փորձագետներ:

**Փորձագետները** կոմպետենտ մարդիկ են, որոնք ունեն այս կամ այն ոլորտի վերաբերյալ խորը և բազմակողմանի գիտելիքներ:

Փորձագետների հարցումը անցկացվում է մասնագետների նեղ շրջանում՝ հատուկ ինֆորմացիա ստանալու նպատակով:

Փորձագիտական հարցման հիմնական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս բացահայտել հիմնախնդրի առավել էական, կարևոր ասպեկտները, մեծացնում է ինֆորմացիայի և եզրահանգումների հուսալիության, ճշգրտության և հիմնավորվածության աստիճանը փորձագետների գիտելիքների և փորձի օգտագործման շնորհիվ: Փորձագիտական հարցումը անցկացվում է նախապես մշակված հարցաթերթիկի կամ հարցազրույցի ուղեցույցի միջոցով: Փորձագիտական հարցումը կարող է լինել անհատական և խմբային:

**Նեղ իմաստով** փորձագետ է համարվում այն մասնագետը, որը այդ բնագավառում հայտնի է իր մասնագիտական ընդունակություններով, խորաճանաչությամբ:

**Լայն իմաստով**, յուրաքանչյուր ոք, ով որոշակի հետազոտական ոլորտի վերաբերյալ ունի առավել ծավալուն և հավաստի գիտական ինֆորմացիա:

### **Փորձագետների ընտրության չափանիշները.**

1. **Մասնագիտական իրավասություն**, որի որոշման ցուցանիշներն են՝ մասնագիտական ստաժը, հրատարակված աշխատանքների թիվը, գիտական գրականության մեջ այդ աշխատանքներից արվող մեջբերումների քանակը, այդ աշխատանքների գիտական, հասարակական գնահատականը:
2. **Մասնագետի գիտելիքների “թարմությունը”:**
3. **Փորձագետի անհատական որակները**, ինչպիսիք են՝ գիտական հայացքների հաստատունությունը, մտածողության ճկունությունը, որակապես նոր ինֆորմացիան յուրացնելու և ձևավորելու ունակությունը:
4. **փորձագետի բարձր բարոյական հատկանիշները:**

### **Փորձագետների ընտրության մեթոդները**

1. Ձևական կամ օբյեկտիվ մեթոդ, որը հանգում է փորձագետի մասին փաստագրական տվյալների վերլուծությանը:
2. Ապագա փորձագետների ընտրություն խմբի կողմից՝ բաց կամ փակ քվեարկության հիման վրա:
3. Միջին բալերով ապագա փորձագետների փոխադարձ գնահատման մեթոդ:
4. Հատուկ թեստերի միջոցով իրականացվող ընտրության մեթոդ:
5. Ինքնագնահատման մեթոդ
6. “Ձևակույտի” մեթոդ:

### **Փորձագետների հարցման մեթոդները**

- |                          |                    |
|--------------------------|--------------------|
| 1. Հարցազրույց           | 4. Անկետավորում    |
| 2. Բանավեճ               | 5. Ուղեղների գրոհ  |
| 3. Համեմատական գնահատում | 6. Դելֆյան տեխնիկա |

### **Հարցազրույց**

**Հարցազրույցի** հիմքում ընկած է զրույցը կամ խոսքային հաղորդակցությունը, սակայն այս դեպքում զրուցակիցների դերերն ամրագրված, նորմավորված են, իսկ նպատակները

պայմանավորված են հետազոտության այն ծրագրով, որի շրջանակներում անցկացվում է հարցազրույցը: Հարցազրույցն իր մեջ զուգակցում է նաև դիտարկման մեթոդը: Այն հնարավորություն է տալիս անմիջականորեն ուսումնասիրել օբյեկտը հենց հարցման ընթացքում:

Տարբերում են հարցազրույցի մի քանի տեսակներ՝ ելնելով տարբեր հիմքերից:

Ըստ հարցազրույցի ձևայնացվածության աստիճանի հարցազրույցները լինում են՝ ֆորմալիզացված (ստանդարտացված) և ոչ ֆորմալիզացված, ազատ:

**Ձևայնացված հարցազրույցի** դեպքում հետազոտողը պատրաստում է հիմնականում փակ, որոշակի հաջորդականությամբ հարցերի ամրապնդված ձևակերպումներով հարցաթերթիկ: Այս դեպքում հարցվողին մնում է հիմնականում ընտրել տրված հարցին իրեն համապատասխան տարբերակներից մեկը: Ստանդարտացված հարցազրույցը ենթադրում է հարցնողի վարքի որոշակի ռեգլամենտավորվածություն: Այստեղ հարցնողը հանդես է գալիս միայն որպես կատարող: Նա չպետք է շեղվի հարցաթերթիկում նախատեսված հարցերի ձևակերպումից և հաջորդականությունից: Հարցազրույցների այս տեսակը սովորաբար կիրառում են քանակակն հետազոտությունների դեպքում, և հաճախ կոչվում են սոցիոլոգիական հարցումներ:

**Ոչ ձևայնացված հարցազրույցը** որոշակի թեմայի շուրջ գրույց է, որտեղ նախապես հաստատված է միայն թեմատիկ ուղղվածությունը, սակայն կոնկրետ հարցեր գրված չեն: Այստեղ միայն հարցազրուցավարին տրվում է հարցերի այն շրջանակը, որոնք հետաքրքրում են հետազոտողին: Ոչ ձևայնացված հարցազրույցները կիրառվում են որակական հետազոտությունների ընթացքում: Ոչ ձևայնացված հարցազրույցը ևս ունի իր տարատեսակները՝

- ✓ Ազատ հարցազրույցը տարբերվում է նրանով, որ այն չունի նախապես մշակված պլան կամ ձևակերպված հարցեր: Այն ունի միայն թեմատիկ ուղղվածություն: Այս դեպքում հարցնողին տրվում է լրիվ ազատություն, նա կարող է անկաշկանդ ձևակերպել հարցերը, ճշտորոշել թեմայի ուղղվածությունն ու խորությունը, գրույցի տևողությունն ու հարցերի հաջորդականությունը: Հարցնողը, ելնելով իրավիճակից, պետք է շփման եզրեր փնտրի հարցվողի հետ, ընթացքից մտովի կառուցի և խմբագրի հարցազրույցի պլանը: Հարցազրույցի այս ձևը կիրառվում է հետազոտության հիմնական փուլից առաջ, նախնական հետազոտման փուլում՝ օբյեկտի հետ ավելի մոտիկից ծանոթանալու, հարցաթերթիկի թեմատիկ սյուժեն որոշելու և ստուգելու նպատակով: Հիմնականում օգտագործվում է փորձագետների հետ հարցում անցկացնելիս: Այս տիպի հարցազրույցները հիմնականում անցկացվում են հենց հետազոտողների կողմից: Ազատ հարցազրույց անցկացնողի հմտությունից, հոգեբանական տակտից և փորձից է կախված գործի ողջ հաջողությունը, տվյալների լրիվությունն ու հավաստիությունը:
- ✓ Խորին հարցազրույցի դեպքում բացի բուն թեմայից նախապես պատրաստվում են մի շարք հարցեր, որոնք պետք է հարցազրույցի ընթացքում շոշափվեն: Հարցման այս

եղանակը կիրառվում է որոշակի հարցերի սահմանափակ շրջանակի վերաբերյալ հասարակական կարծիքը նախապես ստուգելու, հասարակական տրամադրություններն ու դիրքորոշումները շոշափելու նպատակով: Կիրառվում է նաև հարցվողների վերաբերմունքի ու շարժառիթների ուսումնասիրության ժամանակ: Այս դեպքում հարցազրույցներն իրականացնում են հարցազրուցավարները: Նախապես որոշվում է զրույցի ընթացքում շոշափվող հարցերի խումբը: Զրույցի անցկացման սոցիալ-հոգեբանական ռազմավարությունը, հարցերի բովանդակությունն ու հաջորդականությունը թողնվում է հարցնողի տնօրինությանը: Խորին և ազատ հարցազրույցների ընթացքում ստացվում է նաև կողմնակի, հարցազրույցից անմիջապես չբխող նյութ:

- ✓ **Հարցազրույց բաց հարցերով:** Այս դեպքում գործողության մեջ է դրվում հարցազրույցի որոշակի պլանը, որը նախապես պատրաստվում է հետազոտողի կողմից: Հարցնողը խստորեն հետևում է հարցազրույցի պլանի հարցերի հաջորդականությանը, ձևակերպումներին: Հարցազրույցի պլանն իրենից ներկայացնում է բաց հարցերի հավաքածու: Հարցնողից պահանջվում է, որ նա հարցի ձևակերպումը տա բոլորի կողմից մատչելի ձևով, ճշտորեն հաղորդի հարցի բովանդակությունը, որից հետո բառացիորեն պետք է գրանցի պատասխանները:

Ըստ հարցազրույցի ընթացքում շոշափվելիք թեմաների բազմազանության լինում են՝ ֆոկլուսավորված (ուղղորդավորված) և ոչ ֆոկլուսավորված:

**Ուղղորդավորված, ֆոկլուսավորված** հարցազրույցի դեպքում նպատակ է դրվում հավաքել հարցվողների կարծիքը որևէ կոնկրետ իրավիճակի, պատճառների, հետևանքների վերաբերյալ: Հարցվողների ուշադրությունը սևեռվում է հետազոտողի կողմից նախապես ընտրված իրականության որոշակի հատվածի, իրավիճակի վրա: Հարցվողները նախապես ծանոթանում են իրավիճակին, նրա առանձին կողմերին: Նման հարցազրույցն ազատ բնույթ է կրում, որի ընթացքում խստորեն սահմանագծվում է հարցերի այն շրջանակը, որի մասին հետազոտողը ձգտում է արդյունքներ ստանալ: **Ոչ ֆոկլուսավորված հարցազրույցի** դեպքում շոշափվում են զանազան թեմաներ:

Ոչ ստանդարտացված հարցազրույցների տարատեսակների կիրառման դեպքում շատ կարևոր է հարցվողների պատասխանների հնարավորինս մանրամասն գրառումը: Պատասխանի առավելագույն ճշտությունն ապահովելու նպատակով դիմում են ձայնագրությանը կամ սղագրությանը: Երկրորդի դեպքում հարցազրույցն անցկացվում է օգնականի մասնակցությամբ, որը մի կողմում նստած գրանցում է պատասխանները: Այստեղ հարկ է նշել, որ երրորդ անձի ներկայությունը, որը մանրամասն գրի է առնում պատասխանները, կարող է զգաստացնել հարցվողին և ազդել պատասխանների վրա: Պատասխանների գրանցման դեպքում օգնականը պետք է նստի այնպես, որ հարցվողին տեսանելի լինի կողքից, իսկ հարցնողը նստում է հարցվողի դիմաց: Այս դեպքում ուշադրությունն ուղղված է լինում հարցնողին, իսկ գրանցողից ուշադրությունը շեղվում է: Մինչև ժամանակ պատասխանների գրանցման փաստը չի թաքցվում:



Հարցազրույցի այս տեսակների հիմնական թերությունն այն է, որ նրանց միջոցով ստացված տվյալները չեն ենթարկվում վիճակագրական մշակման: Դրանք ենթարկվում է տեքստային բովանդակային վերլուծության: Առանձնացվում են զրույցի հանգուցային կետերը, առավել նշանակալից պատասխանները:

### **Ըստ ռեսպոնդենտների քանակի**

- **Անհատական**
- **Խմբային**

### **Քանակական հարցում**

**Հարցումը** սոցիոլոգիական հետազոտության ամենատարածված ձևերից է ամբողջ աշխարհում:

Հարցումը ինֆորմացիայի կանոնավոր հավաքագրման գործընթաց է, որը դուրս է բերվում հարցվողին տրված հարցերի պատասխաններից: Հարցման նպատակն է չափել մարդկանց կարծիքները, դիրքորոշումները և վարքագիծը՝ նրանց հարցեր տալու միջոցով:

Հարցումը ենթադրում է մարդկանց որոշակի խմբի անմիջական դիմում՝ նրանց կարծիքներն ու տեսակետները, այս կամ այն իրավիճակում վարքագծի ձևերը պարզելու, որոշակի փաստեր արձանագրելու նպատակով:

Գոյություն ունեն հարցումների մի քանի տեսակներ՝ **փոստային հարցում, հեռախոսային հարցում, ինտերնետային տեխնոլոգիաների վրա հիմնված հարցում, դեմ առ դեմ հարցում**: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունը, և կոնկրետ հարցման տեսակի ընտրությունը պայմանավորված է լինում հետազոտության խնդիրներով և իրականացնող կազմակերպության ձեռքի տակ առկա ռեսուրսներով (ֆինանսական, ֆիզիկական և մարդկային):

**Փոստային հարցման** դեպքում տպագիր հարցաթերթիկները փոստով ուղարկվում են նախապես որոշված պոստենցիալ ռեսպոնդենտներին և նրանց խնդրվում է լրացնել և հետ ուղարկել հարցաթերթիկները փոստով: Փոստային հարցման կազմակերպման ժամանակ պետք է որոշակի ցուցումներ հաշվի առնել.

1) Հարցաթերթիկը պետք է մշակված լինի բուկլետի տեսքով՝ ռեսպոնդենտի համար առավել հարմար դարձնելու և պրոֆեսիոնալ տեսքը երաշխավորելու նպատակով: Պետք է խուսափել գովազդային գրքուկի ցանկացած նմանությունից: Բավականին կարևոր նշանակություն ունի հարցաթերթիկի արտաքին էսթետիկ տեսքը: Հարցերի միջև պետք է համապատասխան տարածություն լինի, հարցը չպետք է սկսի մեկ էջում և ավարտվի մեկ այլ էջում, ցուցումները պետք է հստակ լինեն և տարբերվեն բուն հարցից և առաջարկվող

պատասխանների տարբերակներից, վիզուալ իլյուստրացիաները (գրաֆիկներ, քարտեզներ, նկարներ) պետք է ուշադիր և համապատասխան կերպով ներդրվեն հարցաթերթիկներում:

2) Պետք է կազմել ուղեկցող նամակ, որը պետք է տեղադրել բուկլետի առաջին էջում: Բուկլետի վերջին էջը պետք է թողնել ռեսպոնդենտին մասնակցության համար շնորհակալական խոսքեր հղելու, հետադարձ հասցեն նշելու և ցուցումներ՝ լրացված հարցաթերթիկը վերադարձնելու համար: Այն պետք է պարունակի նաև նախապես վճարված նամակի ծրարը՝ պատասխան ուղարկելու հնարավորությամբ:

3) Հարցաթերթիկները պետք է դրոշմակնքվեն որևէ համարով կամ կողով հետագայում հետագա լրացուցիչ մոնիտորինգի նպատակով և այդ համարը կամ կողի առկայությունը պետք է բացատրվի ռեսպոնդենտին ուղեկցող նամակում, հավաստիացնելով անանունությունն ու գաղտնիությունը:

Հարցաթերթիկները պետք է ուղարկել ծրարով նախապես որոշված հասցեով: Պետք նշել նաև ամսաթիվը, որը նախատեսվում է լրացված հարցաթերթիկները վերադարձնելու համար: Այդ ամսաթիվը սովորաբար պետք է լինի ուղարկված ամսաթվից մոտավորապես երկու շաբաթ անց: Նշված վերջնաժամկետում այն ռեսպոնդենտներին, որոնցից պատասխան չի ստացվել, կարելի է հիշեցում ուղարկել, հարգալից կերպով խնդրելով լրացնել և հետ վերադարձնել հարցաթերթիկը: Երկրորդ լրացուցիչ հիշեցում կարելի է ուղարկել ևս երկու շաբաթ անց (առաջին ուղարկված նամակից 4 շաբաթ անց), որը պետք է ներառի նոր ուղեկցող նամակ, որտեղ կարելի է վերադարձման վերջնաժամկետ չնշել, այլ ևս մեկ անգամ շեշտադրել պատասխանելու կարևորությունը: Կարելի է ուղարկել հարցաթերթիկի ևս մեկ օրինակ, քանի որ նախորդ ուղարկվածը կարող է կորցված կամ փչացված լինել:

Նշված ընթացակարգերը կարող են ապահովել մոտ 50% վերադարձելիություն և դա կարելի է համարել բավարար վերլուծության և հաշվետվություն կազմելու համար, եթե հետազոտողին բավարարում է ներկայացուցչականությունը: Եթե հետազոտողը ցանկանում է ապահովել վերադարձելիության ավելի բարձր աստիճան, և ունի բավարար ժամանակ և ռեսուրսներ, ապա կարելի է շարունակել որոշակի ընթացակարգեր՝ դեռևս չլրացված հարցաթերթիկները լրացված վիճակում ետ ստանալու համար՝ զանգահարել դեռևս չպատասխանած ռեսպոնդենտներին, ուղարկել ևս մեկ՝ երրորդ հիշեցումը, հատուկ ուղեկցող նամակ ուղարկել:

**Ինտերնետային հարցումը** վերը շարադրված ավանդական փոստային հարցման այլընտրանք է, որի դեպքում ռեսպոնդենտների հետ կապվում են էլեկտրոնային փոստի միջոցով: Ինտերնետային հարցման կազմակերպումը այնքան էլ բարդ չէ: Այս դեպքում կարևոր է, որ հետազոտական թիմից առնվազն մեկը տիրապետի ինտերնետային տեխնոլոգիաներին: Նմանատիպ հարցում կարելի է կազմակերպել հետևյալ կայքի տրամադրած ռեսուրսներով՝ <http://www.zoomcrang.com/>: Այս դեպքում տվյալների բազան հասանելի է միայն կամ հիմնականում օնլայն:

**Հեռախոսային հարցումը** տեղեկատվության հավաքագրման մեթոդ է, որի ընթացում կիրառվում է հեռախոսային հարցազրույցը հարցազրուցավարի և ընտրված ռեսպոնդենտների միջև:

**Անմիջական դեմ առ դեմ հարցումները** թույլ են տալիս տվյալներ հավաքագրել՝ հարցազրուցավարների և ռեսպոնդենտների միջև անմիջական, անհատական հարցազրույցների անցկացման միջոցով:

Հեռախոսային և դեմ առ դեմ հարցման կազմակերպման ընթացակարգերը գրեթե նույնն են՝

- 1) հարցազրուցավարների ընտրություն
- 2) հարցազրուցավարների հրահանգավորում
- 3) բուն հարցման գործընթացի իրականացում
- 4) վերահսկում

Քանի որ հարցման այս տեսակների դեպքում ռեսպոնդենտը հարցաթերթիկի հարցերին պատասխանում է միջնորդավորված՝ հարցազրուցավարի միջոցով, վերջինիս որակներից ճիշտ վարքագծից է կախված հարցազրույցի հաջողությունը: Այս հարցի շուրջ կխոսենք ավելի ուշ:

### ***Ընտրանքի կազմավորում***

Հետազոտության ծրագրի այս մասում պետք է ներկայացնել հետազոտության ընտրանքի բնութագրիչները, չափերը և հիմնավորել նպատակահարմարություն՝ ելնելով հետազոտության նպատակներից և հիպոթեզներից / որքան հստակ է նպատակը և որքան պարզ է ձևակերպված հիպոթեզը, այնքան առավել հստակ կարելի կազմել ընտրանքային համախմբությունը/, ներկայացուցչականության ապահովման պահանջներից և հետազոտողի կազմակերպական հնարավորություններից:

Հետազոտության օբյեկտը հանդիսանում է հետազոտության ***գլխավոր համախմբությունը***: Սակայն հաճախ այն բավականին մեծ է և անհնար է ներառել բոլորին: Այս դեպքում կազմվում է ***ընտրանքային համախմբությունը (ընտրանք)***, որն իր սոցիալ-դեմոգրաֆիական բնութագրիչներով հանդիսանում է գլխավոր համախմբության մոդելը:

***Ներկայացուցչական ընտրանք*** նշանակում է, որ վերջինիս կառուցվածքը ըստ առանձնացված չափանիշների պետք է արտացոլի գլխավոր համախմբության համապատասխան մասնաբաժինները: Միևնույն ժամանակ հետազոտության հիմնախնդրին վերաբերող բոլոր նշանակալի չափանիշներով անհնար է կազմել ներկայացուցչական

ընտրանք, ուստի անհրաժեշտ է վերլուծության հիմնական ուղղվածության համար անհրաժեշտ չափանիշների ներկայացուցչականությունն ապահովել:

Անհրաժեշտ է նախ և առաջ պարզել, թե գլխավոր համախմբության վերաբերյալ մեզ հայտնի բնութագրերից որոնք են էական հետազոտության խնդիրների համար: Հիմնականում էական նշանակություն են ունենում հետազոտվողների սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական, տնտեսական կարողությունները, վերջիններիս տարածքային տեղակայումը: Մակային օրինակ էթնիկ տարասեռ համայնքում էական նշանակություն կունենա ընտրանքային համախմբության ձևավորումը ըստ տարբեր էթնիկ պատկանելիության:

Ընտրանքային համախմբության մոդելի նույնացումը գլխավոր համախմբությանը գնահատվում է **ընտրանքի սխալով**: Թույլատրելի սխալի սահմանները պայմանավորված է հետազոտության նպատակից: Երբեմն այն անհրաժեշտ է հասցնել նվազագույնի, երբ օրինակ խոսքը գնում է բնակչության տնտեսական և դեմոգրաֆիական ուսումնասիրությանը /օրինակ, մարդահամար/:

Ընդունված է ընտրանքային համախմբության ուսումնասիրության վստահելիության հետևյալ գնահատումը՝

- Բարձր վստահելիության դեպքում թույլատրելի է ընտրանքի 3% սխալ
- սովորականը – 3-10%
- մոտավորապեսը – 10-20%
- կողմնորոշվածը – 20-40%
- ենթադրականը - 40%

Ընտրանքային համախմբության քանակը պայմանավորված է հետազոտվող օբյեկտի միասեռությամբ և տարասեռությամբ: Որքան միասեռ է այնքան ավելի քիչ քանակությունը կարող է ապահովել հավաստի վիճակագրական եզրակացություններ: Միևնույն ժամանակ հետազոտվող օբյեկտի միասեռությունը պայմանավորված է նրանով, թե որքան մանրամասն ենք մենք այն ուսումնասիրում: Իրականում ցանկացած էլեմենտար օբյեկտ կարող է բարդանալ: Միայն թե մենք վերլուծությունում ներկայացնում ենք վերջինիս այս կամ այն հատկանիշները՝ պարզեցնելով այն:

Սոցիոլոգիական գրականության մեջ նշվում են ընտրանքի հաշվման բանաձև, տարբեր տեխնիկաներ: Կան հեղինակներ, որ նշում է 5 տոկոսանոց սխալի դեպքում ընտրանքային համախմբության հետևյալ հաշվարկները՝

Գլխավոր	500	1000	2000	3000	4000	5000	10000	100000
---------	-----	------	------	------	------	------	-------	--------

համախմբություն								
Ընտրանքային համախմբություն	222	286	333	360	360	370	385	395

Երբ գլխավոր համախմբությունն ավելին է քան 100000, ապա ընտրանքը կազմում է 400 միավոր: Հեղինակները հաշվարկել են նաև 50000 և ավելի համախմբության դեպքում ընտրանքային համախմբության տարբեր քանակների դեպքում հնարավոր սխալի %: Աղյուսակը ներկայացված է ներքոշարադրյալ՝

Ընտրանքի չափը եթե գլխավոր համախմբությունը հավասար է և մեծ է 5000	25	45	100	123	156	204	400	625...
Ընտրանքի տվյալ չափի դեպքում հնարավոր սխալը	20	15	10	9	8	7	5	4

**ԸՆՏՐԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Գլխավոր համախմբության ոչ շատ մեծ քանակի դեպքում կիրառում են **պատահական չկրկնվող** ընտրանք, որտեղ բոլոր միավորներին տրվում է հավասար հնարավորություն ներառվելու ընտրանքային համախմբության մեջ՝ առաջնորդվելով գլխավոր համախմբության ընդհանուր ցուցակով: Պատահական ընտրվում են նախատեսված քանակը:

Մեծաքանակ գլխավոր համախմբության դեպքում, ինչպիսին է, օրինակ, բնակչությունը, կիրառում են **բազմաստիճան ընտրանք** շրջաններով, թաղամասերով: Ընտրության յուրաքանչյուր քայլին հարկավոր է ապահովել բնակչության ներկայացուցչականությունը:

Ընտրանքի մեկ այլ տարատեսակ է **սիստեմատիկ** ընտրանքը: Օրինակ ունենալով գործարանի բոլոր աշխատակիցների ցուցակը / նրանք 2000/ և որոշելով ընտրանքային համախմբության չափը /օրինակ 200/ կարող են ստանալ ընտրանքի քայլը՝ գլխավոր համախմբության քանակը բաժանելով ընտրանքային համախմբության քանակի վրա.  $2000 / 200 = 10$ : Այսպիսով ընտրանքի քայլը 10 հետևաբար գլխավոր համախմբությունից ընտրվում են յուրաքանչյուր 10-րդ մարդը :

**Հարցման տեսակների առավելությունները և թերությունները**

Տեսակը	Առավելությունները	Թերությունները
Փոստային	<ul style="list-style-type: none"> <li>▪ քիչ ծախսատարություն</li> <li>▪ հեշտ է կազմակերպելը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>▪ համեմատաբար երկարատև ժամանակահատված</li> </ul>

<p>հարցում</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ հարցվողը բավականաչափ ժամանակ ունի հարցերի շուրջ մտածելու և պատասխանելու համար</li> <li>▪ պաշտոնականության զգացում</li> <li>▪ անանունության առավել բարձր աստիճան</li> <li>▪ հարցազրուցավարի ազդեցության ավելի ցածր աստիճան</li> <li>▪ բարդությունը. հարցաթերթիկում կարելի է ներառել բարդ հարցեր</li> <li>▪ վիզուալ միջոցների (նկար, քարտեզ, նն) կիրառման հնարավորությունը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>▪ ընտրության ազատություն</li> <li>▪ հարցազրուցավարի ընդգրկման բացակայություն</li> <li>▪ չլրացված բաց հարցեր</li> <li>▪ վերադարձելիության ցածր աստիճան</li> <li>▪ հարցերը ճշգրտելու հնարավորության բացակայությունը</li> </ul>
<p>Ինտերնետային տեխնոլոգիաների վրա հիմնված հարցում</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ հարմարությունը</li> <li>▪ տվյալների արագ հավաքագրում</li> <li>▪ ծախսարդյունավետությունը</li> <li>▪ բավականաչափ ժամանակ</li> <li>▪ հետագա քայլերի հեշտությունը</li> <li>▪ գաղտնիություն և անվտանգություն</li> <li>▪ մասնագիտացված բնակչություն</li> <li>▪ բարդություն և վիզուալ միջոցների օգտագործման հնարավորությունը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>▪ Ռեսպոնդենտների սահմանափակ բազա</li> <li>▪ ընտրության ազատություն</li> <li>▪ հարցազրուցավարի ընդգրկման բացակայություն</li> </ul>
<p>Հեռախոսային հարցում</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ տվյալների արագ հավաքագրում</li> <li>▪ քիչ ծախսատարություն</li> <li>▪ անանունության ավելի բարձր աստիճան</li> <li>▪ համոզվածություն, որ հարցաթերթիկի ցուցումներին հետևել են</li> <li>▪ կենտրոնացված վերահսկում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>▪ վիզուալ միջոցների կիրառման բացակայությունը</li> <li>▪ բարդության ավելի ցածր աստիճան. բարդ հարցեր կազմել հնարավոր չէ</li> <li>▪ 15-20 րոպեից ավելի դժվար է պահել հետաքրքրությունը</li> <li>▪ պոտենցիալ ռեսպոնդենտների սակավ քանակ (կարելի է հարցնել միայն այն անձանց, ովքեր հեռախոս ունեն)</li> </ul>
<p>Դեմ առ դեմ հարցազրույց</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ ճկունությունը</li> <li>▪ բարդ հարցեր ընդգրկելու ավելի մեծ հնարավորությունը</li> <li>▪ բնակչության դժվարամատչելի խմբերի հետ կապվելու հնարավորությունը</li> <li>▪ Ցուցումներին հետևելու համոզվածությունը</li> <li>▪ երկար հարցազրույց անցկացնելու հնարավորությունը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>▪ մեծ ծախսեր</li> <li>▪ հարցազրուցավարի ազդեցության ավելի բարձր աստիճան</li> <li>▪ Ռեսպոնդենտների՝ համագործակցելու պատրաստակամ չլինելը</li> <li>▪ սթրեսի ավելի մեծ աստիճան</li> <li>▪ անանունության ավելի ցածր աստիճան</li> </ul>

## **Շրջանավարտի մասնագիտական զբաղվածության պրոֆիլները**

Այս մակարդակի շրջանավարտների որակավորումը թույլ է տալիս նրանց աշխատելու տեղեկատվական տեխնոլոգիաների այնպիսի կազմակերպություններում, որոնք մասնագիտացված են համակարգչային սարքավորումների և համակարգչային ծրագրերի ստեղծման մեջ, նրանք կարող են աշխատել նաև ինդուստրիալ ինքնավարական արդյունաբերություններում, ինչպես նաև այն բոլոր տիպի կազմակերպություններում, որոնք տեղեկատվական համակարգերն ու համակարգչային ցանցերը կիրառում են ներքին արտադրության և կառավարման գործընթացների համար: Նրանք կարող են նաև աշխատել որպես անկախ մասնագետներ կամ ինքնավար կապալառուներ՝ գլխավորապես հատուկ կիրառությունների թվայնացված վերահսկման համակարգերի մշակման համար: Ավելին, ծրագիրն ուսանողներին կապահովի կրթական առաջընթացի համար անհրաժեշտ պահանջներով համակարգչային ինժեներիայում և ինքնավարության ոլորտում:

## **Շրջանավարտների Մասնագիտական Զբաղվածության Պրոֆիլները**

Պատմության բաժնի բակալավրի ուսուցման համակարգի ուսանողները կարող են իրականացնել զանազան գործունեություններ մասնավոր և հասարակական կազմակերպություններում՝ ստանձնելով այնպիսի պատասխանատվություններ, որոնք կապված են պատմական հետազոտության համակարգման և իրականացման, մշակութային ժառանգության՝ հատկապես արխիվների, գրադարանների, մատենագրական նյութերի պահպանման և գնահատման, հրատարակման, լրագրության և այլ տարբեր համատեքստերի հետ՝ ներառյալ հանրային վարչարարությունը և միջազգային մշակութային հարաբերությունները: Շրջանավարտները կարող են ներգրավվել այնպիսի ծրագրերում, որտեղ թողարկվում են ուսուցիչներ պատմության և գրականության ասպարեզներում, նրանք կարող են մրցակցել պետական ադմինիստրացիայում առաջարկվող այնպիսի տեղերի համար, որոնք առնչվում են ուսուցանման, արխիվների, գրադարանների և թանգարանների կառավարման, խորհրդարանական փաստաթղթերի և տեղեկատվական ծառայությունների, ինչպես նաև դիվանագիտական կարիերայի հետ:

## **IV օրինակ- Բիզնես Վարչարարության առաջին փուլի աստիճանաշտրի ծրագրի/բակալավր/ նկարագրությունը**

### **Ծրագրի անվանումը՝**

Բիզնես Վարչարարություն

### **Ծրագրի Մակարդակը՝**

Մասնագիտական Բակալավրիատի աստիճան

### **Շնորհվող որակավորումը՝**

Ձեռնարկատիրությունների և Հիմնարկությունների Մենեջեր

Որակավորման մակարդակը՝

Ծրագրի բարեհաջող ավարտի դեպքում շրջանավարտը ձեռք է բերում Բակալավրի դիպլոմ և ՝Ձեռնարկատիրությունների և Հիմնարկությունների Մենեջեր՝ որակավորումը, որը համապատասխանում է մասնագիտական որակավորումների 5-րդ մակարդակին և դա

համահունչ է Լատվիական Որակավորումների Շրջանակի 6-րդ մակարդակին և Եվրոպական Որակավորումների Շրջանակների 6-րդ մակարդակին:

### **Ընդունելության Հատուկ Պահանջները**

Կրթական ծրագրի ընդունելությունը կազմակերպվում է ըստ տվյալ դպրոցի ընդունելության կանոնակարգերի, որոնք հաստատվում են Սենատի կողմից յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբի համար:

### **Նախորդ ուսումնառության ճանաչման հատուկ նախապատրաստական աշխատանքներ**

Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչման համար գոյություն ունի իրավական շրջանակ՝ ցկյանս ուսումնառության խթանման և կիրառման համար: 2012թ-ի Հունվարի 10-ին Նախարարների Կաբինետը հրատարակեց Համար 36 “ Նախորդ Ուսումնառության կամ մասնագիտական փորձի Ուսումնառության Վերջնարդյունքների ճանաչման Ընթացակարգերի Կանոնակարգերը”: Ընթացակարգային փաստաթուղթը մշակվել է դպրոցի կողմից և հաստատվել Սենատի կողմից: Նախագծվել են ցկյանս ուսումնառության խթանման գործընթացները: Ծրագրերը նախագծված են ուսումնառության վերջնարդյունքներով, որոնք ապահովում են թափանցիկություն և համեմատելիություն: ԵԿՏՓ-ն կիրառելի է ցկյանս ուսումնառության մեջ: Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչման հիմնական նախապատրաստական աշխատանքները բացատրվում են Նախորդ Ուսումնառության ճանաչման Ընթացակարգերի կանոնակարգերում, որոնք հաստատվել են 2012թ-ին Սենատի կողմից: Փաստաթուղթը բացատրում է գործընթացը, չափորոշիչները և ճանաչման կարգը:

### **Որակավորման պահանջներն ու կանոնակարգերը**

Բակալավրի աստիճանի և որակավորման ձեռքբերման համար, ուսանողը պետք է իրագործի հետևյալ ծրագրային պահանջները.

- Ընդհանուր և դասընթացին հատուկ ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերում
- Ընտրողական դասընթացի ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերում
- Որևէ ընկերության աշխատանքի տեղավորման գործընթացի դիտարկում
- Բակալավրի կուրսային աշխատանքի պատրաստում և պաշտպանություն

### **Ծրագրի պրոֆիլը**

Ծրագիրը նպատակաուղղված է ընձեռելու այնպիսի հնարավորություններ, որպեսզի ուսանողները տիրապետեն այնպիսի գիտելիքների, հմտությունների և կարողությունների, որոնք կդարձնեն նրանց ազգային տնտեսության կոմպետենտ մենեջերներ հարափոփոխ սոցիալ-տնտեսական պայմաններում, որոնք կարող են կիրառել իրենց գիտելիքները՝ կառավարելով գործընթացներն ու լուծելով խնդիրները, ինչպես նաև կայացնելով



որոշումներ առնչվող ոլորտներում: Շնորհիվ որակավորումը երաշխավորում է, որ շրջանավարտները ձեռք են բերել ձեռնարկատիրության կատարողականության գլխավոր սկզբունքների ձևակերպման և սահմանման հմտություններ, ըստ ձեռնարկության սահմանված նպատակների՝ աշխատանքների պլանավորման և կառավարման, մարդկանց հետ աշխատելու հմտություններ և տարբեր փոփոխություններին հարմարվելու հմտություններ կտրուկ փոփոխվող բիզնես միջավայրերում, կառավարման ոլորտում՝ մասնագիտական 5-րդ կատեգորիայի որակավորման ձեռնարկատիրությունների և հիմնարկությունների մենեջեր՝ մասնագիտական չափորոշիչներին համապատասխան, որը համահունչ է Լատվիական Որակավորումների Շրջանակի և Եվրոպական Որակավորումների Շրջանակի 6-րդ մակարդակին: Ուսանողները սովորում են փորձառու և պրոֆեսիոնալ դասախոսական կազմի հսկողության ներքո և ստանում են 240ԵԿՏՓ(160 Լատվիական կրեդիտներ): Ուսանողները գտնվում են միջազգային ուսումնառության միջավայրում: Ուսանողները իրավասու են սովորելու Erasmus + փոխանակման ծրագրերում: Նրանք նաև հնարավորություն ունեն սովորելու գործընկեր համալսարանների միջազգային դասախոսական կազմի հսկողության ներքո: Ուսումնական պրակտիկայի կազմակերպումն ու կառավարումը ծրագրի մի մասն է կազմում: Ուսումնական պրակտիկայի հանձնարարությունները հստակորեն ձևակերպված են, հրահանգներն ու ուղեցույցները հասնելի են առցանց բոլորի համար:

### **Առանցքային ուսումնառության վերջնարդյունքները**

Ծրագրում սահմանված են հետևյալ ուսումնառության վերջնարդյունքները.

6. Տնտեսական զարգացման օրինաչափությունների ըմբռնման, ազգային տնտեսության և դրանց բացատրման, կարևոր քննարկումների մասնակցության և ըստ փոփոխվող հանգամանքների՝ որոշումներ կայացնելու կարողություններ:
7. Ձեռնարկատիրության կառավարման մեջ ձեռքբերված գիտելիքները ըստ սահմանված կազմակերպչական և ռազմավարական նպատակների կիրառման, իրականացման գործընթացների հսկման և կազմակերպչական ու ռազմավարական գործունեությունների համար որոշումներ կայացնելու և ճշգրտումներ մտցնելու կարողություններ:
8. Մասնագիտական գործընթացներ իրականացնելու, գիտական մոտեցման կիրառմամբ իրենց մասնագիտության մեջ տեղեկատվության և պրոբլեմների ձևակերպման և վերլուծման, ինչպես նաև լուծումներ տալու կարողություններ:
9. Շրջակա միջավայրի և հասարակության վրա մասնագիտական ազդեցության համար էթիկորեն գործելու և պատասխանատվությունների ըմբռնման կարողություններ:
10. Պարտականությունների ստանձնման կարողություններ, թիմում աշխատելու կարողություններ, պարտականությունների լիազորման և համակարգման, նրանց աշխատանքը արդյունավետ ձևով պլանավորելու և կազմակերպելու, ինչպես նաև կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարման կարողություններ:

### **Շրջանավարտների մասնագիտական զբաղվածության պրոֆիլները**

Շրջանավարտներն աշխատում են թե հանրային և թե մասնավոր ընկերություններում և հաստատություններում, նրանք աշխատում են մանր և միջին ընկերություններում որպես դեպարտամենտի պետ/կառավարիչ:

### **Ապագա ուսուցման հնարավորությունները**

Բակալավրի համակարգի շրջանավարտները կարող են հետագայում սովորել մագիստրատուրայի բաժնի ծրագրերում:

### **Առանձին դարձնաբացային միավոր:Սպառողների վարքագիծը գլոբալ շուկայում**

Ուսումնառության վերջնարդյունքները.

- Ուսանողը կարող է բացատրել և կիրառել կարևոր տերմիններ, սահմանումներ և հասկացություններ՝ կապված սպառողների վարքագծի հետ:
- Ուսանողը կարող է վերլուծել սպառողների վարքագծի ուղղությունները և կիրառել դրանք տվյալ սպառողական շուկայում:
- Ուսանողը կարող է նկարագրել այն գործոնները, որոնք ազդում են սպառողների որոշման վրա արտադրանքի գնման տեսակետից:
- Ուսանողը կարող է գնահատել տարբեր գովազդների, ինչպես նաև այլ խթանող գործընթացների արդյունավետությունը, ինչպես նաև դրանց ազդեցությունը սպառողների վարքագծի վրա:

### ***ՄԿԾ պատասխանատուների աշխատանքային պլանը***

<b>Ծրագրի գլխավոր նպատակը:</b>
Վերակառուցել Համալսարանում առկա ՄԿԾ-ները՝ դարձնելով դրանք վերջնարդյունքներին ուղղված:
<b>Ակնկալվող վերջնարդյունքները</b>
Համալսարանի ՄԿԾ-ները պետք է. <ul style="list-style-type: none"><li>• լինեն համահունչ ՈԵՇ-ն և ՈԱՇ-ին,</li><li>• համապատասխանեն աշխատաշուկայի արդի պահանջներին,</li><li>• նպաստեն պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության շարժունությանը (այսինքն՝ ՄԿԾ-ի միջազգայնացմանը):</li></ul>
<b>2. Իրականացման տեղը:</b> ՀԱԱՀ., Երևան, Հայաստան
<b>3. Ժամանակահատված:</b> Վեց ամիս
<b>4. Առաջադրանքների նկարագրություն</b>

Խնդիրներ	Գործընթաց	Մեթոդաբանություն կամ մեխանիզմներ	Վերջնարդյունք	Ժամանակացույց
<p>1. Ստեղծել տվյալ ՄԿԾ-ի վերանայման և բարելավման աշխատանքային թիմ և աշխատանքային պլան,</p>	1. Հավաքել թիմ	Սկզբունքը որոշել ինքնուրույն	<p>Թիմի անդամների ցուցակը, աշխատանքային պլանը, ժամանակացույցը և պատասխանատուների անունները</p>	<p>Առաջին շաբաթ</p>
	2. Կազմել աշխատանքային պլան,	Սկզբունքը որոշել ինքնուրույն		
	3. կատարել պատասխանատվությունների բաժանում			
<p>2. Մասնագիտության կրթական ծրագրի խորքային վերլուծություն</p>	<p>1. Ուսումնասիրել և պարզել.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Առկա են արդյոք բոլոր փատաթղթերը, թե ոչ</li> <li>• Համապատասխանում են արդյոք ուսումնական պլանով նախատեսված առարկաները տվյալ մասնագիտության ուսանողների կողմից ուսումնասիրվող առարկաների հետ</li> <li>• Առկա են արդյոք ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկայական ծրագրերը</li> <li>• Համապատասխանում են արդյոք առարկայական ծրագրերի նպատակը և բովանդակությունը</li> <li>• Որ կուրսից են ուսանողների սկսում շփվել իրենց մասնագիտությանը</li> </ul>	Սկզբունքը որոշել ինքնուրույն	<p>Ներկայացնել հաշվետվություն ստացված տվյալների վերաբերյալ</p>	<p>1 և 2-րդ շաբաթների ընթացքում</p>
	<p>2. <u>Իրականացնել տվյալ մասնագիտության ծրագիրը տեղական և միջազգային որևէ բուհի հետ իրականացնել բենչմարքինգ:</u></p>	<ul style="list-style-type: none"> <li>• ԿԲՌՊՈՎԻ բաժնի ներկայացուցիչի չների աջակցությամբ ուսումնասիրել բենչմարքինգի սկզբունքները,</li> <li>• մշակել մեթոդաբանությունն ու հարցաշարը բենչմարքինգի համար:</li> <li>• Իրականացնել բենչմարքինգ</li> <li>• Կատարել ստացված տեղեկությունների հիման վրա SWOT անալիզ /առանձնացնել մասնագիտության կրթական ծրագրի թույլ, ուժեղ կողմերը, հնարավորություններն ու</li> </ul>		

		վտանգները/:		
	<b>3. Իրականացնել աշխատաշուկայի ուսումնասիրություն</b>	<ul style="list-style-type: none"> <li>• ԿԲՌՊՈՎԻ բաժին աշխատակիցների աջակցությամբ մշակել աշխատաշուկայի կարիքները տվյալ մասնագիտության ոլորտում գնահատելու հարցաշար:</li> <li>• Անցկացնել հարցումները ֆակուլտետային որակի պատասխանատուների օգնությամբ</li> <li>• ԿԲՌՊՈՎԻ բաժին աշխատակիցների աջակցությամբ վերլուծել ստացված տվյալներ</li> </ul>		3-ից 5-րդ շաբաթների ընթացքում
	<b>4. Իրականացնել ուսումնասիրություն շրջանավարտների շրջանում</b>	<ul style="list-style-type: none"> <li>• ԿԲՌՊՈՎԻ բաժին աշխատակիցների աջակցությամբ մշակել տվյալ մասնագիտության շրջանավարտների վերաբերմունքը գնահատող հարցաշար:</li> <li>• Անցկացնել հարցումները ֆակուլտետային որակի պատասխանատուների օգնությամբ</li> <li>• ԿԲՌՊՈՎԻ բաժին աշխատակիցների աջակցությամբ վերլուծել ստացված տվյալներ</li> </ul>		5-ից 7-րդ շաբաթների ընթացքում
3. Մշակել բարելավման պլան-ծրագիր	1.վերլուծել և ամփոփել ստացված բոլոր տեղեկությունները ՄԿԾ-ի մասին	SWOT անալիզի միջոցով	Ներկայացնել բա-ցահայտունները , մշակված	8-ից 10-րդ շաբաթներում

	<p>2. ստացված արդյունքները դնել քննարկման ֆակուլտետային գիտխորհրդում (ներկայացնել բացթողումները ու թույլ կողմերը և քննարկել առկա խնդիրների հաղթահարման ուղին)</p>	<p>զեկույց</p>	<p>բարելավման պլան-ծրագիրը /գործողության պլան, պատասխանատուներ, և ժամանակացույց/</p>	
	<p>3. մշակել բարելավման պլան</p>	<p>Առանձնացնելով խնդիր, գործողություն, պատասխանատուներ, ժամանակացույց, սպասվելիք վերջնարդյունքները և դրանց արդյունավետությունը գնահատող ցուցիչները</p>		
<p>4. Վերջնարդյունքներին ուղղված ՄԿԾ-ի ստեղծում</p>	<p>Ձևակերպել մասնագիտության վերջնարդյունքները</p>	<ul style="list-style-type: none"> <li>Սահմանել մասնագիտության վերջնարդյունքները հիմք ընդունելով Բյուրմի տաքսանոմիան, դուբլինյան դիսկրիպտորները և ՈԱՇ-ը</li> </ul>	<p>Բարելավված ՄԿԾ-ն իր ամբողջական փաթեթով</p>	<p>11-ից 14-րդ շաբաթը</p>
	<p>Մշակել ավարտական ատեստացիաների ձևաչափ և չափանիշներ, որոնք հնարավորություն կտան գնահատել ուսանողների ՄԿԾ-ից ակնկալվող վերջնարդյունքները</p>	<ul style="list-style-type: none"> <li>Քննարկել ավարտական քննությունների խնդիրը և բացահայտել, ինչպես կարելի է ավարտականների ժամանակ չափել արդյոք ուսանողը ձեռք է բերել կրթական ծրագրից ակնկալվող վերջնարդյունքները</li> </ul>		
	<p>Առարկայական ծրագրերի կազմում ըստ վերջնարդյունքների</p>	<ul style="list-style-type: none"> <li>Հանձնարարել համապատասխան ամբիոնին մշակել տվյալ ՄԿԾ-ի մեջ մտնող բոլոր առարկաների վերջնարդյունքները,</li> <li>Թյունինգի մեթոդաբանության միջոցով ստուգել արդյոք այդ առարկայի վերջնարդյունքը նպաստում է ՄԿԾ-ի որևէ վերջնարդյունքի ձևավորմանը,</li> <li>Ստուգել արդյոք ուսումնական պլանով առարկաների վերջնարդյունքների ամբողջականությունը ապահովում է ՄԿԾ-ի վերջնարդյունքների ձեռքբերումը: Եթե բացահայտվում է, որ ոչ բոլոր վերջնարդյունքներն են առարկաները ապահովում, անհրաժեշտ է իրականացնել ստուգում, բացահայտել առարկայական ծրագրերում են առկա թերացումներ և համապատասխան</li> </ul>		<p>11-ից 20-րդ շաբաթներ</p>

		<p>ամբիոններին առաջարկել վերանայել առարկայական ծրագիրը և նրա վերջնարդյունքները:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ստուգել արդյոք առարկայի կողմից առանձնացված բազմագործոնային գնահատման համակարգի չափանիշները և դրանց հատկացված տոկոսաչափը հնարավորություն է տալիս իրականում գնահատել, թե տվյալ առարկայից ուսանողը վերջնարդյունքը ձեռք է բերել, թե ոչ</li> </ul>		
	<p><u>Ամբողջականացնել ՄԿԾ-ն ձևաչափի մեջ</u></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ուսումնասիրել առկա ձևաչափը,</li> <li>• Հավաքել անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները</li> <li>• Կազմել ՄԿԾ-ի փաթեթը</li> </ul>		<p>21-ից 24-րդ շաբաթների ընթացքում</p>
<p><b>5. ՄԿԾ-ի պատասխանատուին ներկայացվող մասնագիտական որակավորման պահանջներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>▪ Տվյալ մասնագիտության ոլորտում փորձի առկայություն</li> <li>▪ Խմբային աշխատանք իրականացնելու հմտություն</li> <li>▪ Վերլուծական կարողություններ</li> </ul>				

**Հավելված**

ՄԿԾ-ի կազման/վերանայման համար Համալսարանի գիտական խորհրդի կողմից 31.08.2012 թ. ( արձ. №1) հաստատվել է **Նոր կրթական ծրագրերի ստեղծման հայտի ձևաթերթը**, որն ունի հետևյալ բաղադրիչները.

**1. Ծրագրի ընդհանուր բնութագիրը**

- Դեպարտամենտ/Ֆակուլտետ.....
- Ամբիոն.....
- Մասնագիտության (մասնագիտացման) անվանումը և դասիչը .....
- Աշխատանքային խմբի ղեկավարը (պատասխանատուն) .....
- Ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար, դրսեկային) .....
- Իրականացման ձևի սահմանում (համատեղ կամ կրկնակի շնորհվող կրթական աստիճան) .....
- Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս, հետազոտող).....
- Ուսումնական պլանի ձևի սահմանում (միասնական և անհատական) .....

**2. Ընդունելության ծավալները**

Ընդունելության ակնկալվող ծավալը 1-ին տարում.....

Ընդունելության հեռանկարային ծավալը.....

**3. Նոր ծրագրի ներմուծման (գոյություն ունեցող ծրագրի վերանայման) հիմնավորումը**

Ամփոփ ներկայացնել նոր կրթական ծրագրի/մասնագիտության ներմուծման անհրա-ժեշտությունն ու տնտեսական նպատակահարմարությունը, ներկայացնել դրա տեղը համալսարանի գործող ծրագրերի շարքում: Պարզաբանել, թե ծրագրի ներմուծումը որքանով կնպաստի համալսարանի/ստորաբաժանման վարկանիշի բարձրացմանը և որքանով է այն համապատասխանում համալսարանի/ստորաբաժանման առաքելու-թյանն ու ստրատեգիական պլանին:

**4. Աշխատաշուկայի վերլուծություն**

Ներկայացնել տվյալներ (պոտենցիալ գործատուների, մասնագետների ու շահագրգիռ պաշտոնյաների կարծիքներ, նախորդող կրթական ծրագրերի շրջանավարտների հայտեր, վիճակագրական և առկա այլ նյութեր) առաջարկվող ծրագրի/մասնագիտության ուղղությամբ աշխատաշուկայի պահանջարկի վերաբերյալ:

**5. Մրցակցային դիրք**

Ներկայացնել ամփոփ տվյալներ Հայաստանի այլ բուհերում իրականացվող նման կրթական ծրագրերի վերաբերյալ և գնահատել առաջարկությունը ներկայացնող համալսարանի/ստորաբաժանման մրցակցային դիրքը (առավելություններ, թերություններ) երկրում (տարածաշրջանում), հիմնավորել, որ առաջարկվող ծրագիրը/մասնագիտությունը նպատակահարմար է (գերադասելի է) իրականացնել հատկապես համալսարանի տվյալ ստորաբաժանումում: Նշել արտաքին (ազգային,

միջազգային) էտալոնային կողմնորոշիչ պահանջները (benchmarks) տվյալ մասնագիտության համար:

#### **6. Ծրագրի նպատակները**

Թվարկել ծրագրի ներմուծման նպատակները (տվյալ ոլորտում մասնագետների տեղային, տարածաշրջանային կամ ազգային պահանջարկի բավարարումը, մասնագետների նախապատրաստումը հետագա ուսումնառության ու հետազոտական աշխատանքի համար, նոր մասնագիտության արտադրական կամ սոցիալական ոլորտի զարգացումը և այլն):

#### **7. Ուսումնառության էլքային արդյունքները**

Նշել, թե ուսանողներն ակնկալվող ինչպիսի գիտելիքների, կարողությունների և ձիրքերի կրիթապետեն ծրագրի հաջող ավարտի դեպքում:

#### **8. Ծրագրի կառուցվածքը**

Նշել կրթական ծրագրի հիմնական մոդուլները և դասընթացները, դրանց բաշխումն ըստ մոդուլների: Ներկայացնել ուսումնական պլանի ուրվագիծը:

#### **9. Տարբերիչ առանձնահատկությունները**

Նշել կրթական ծրագրի առանձնահատկությունները, ուսուցման կամ ուսումնառության նորարարական եղանակները կամ միջոցները, որոնք ծրագրի աշխատանքային խումբը կարևորում է:

#### **10. Ուսումնական պրակտիկան**

Նշել ուսանողների արտադրական և նախաավարտական պրակտիկաների անցկացման ժամկետները, ինչպես նաև այն ձեռնարկությունները և կազմակերպությունները, որտեղ հնարավոր է և նպատակահարմար դրանց անցկացումը:



## **11. Տվյալ մասնագիտությամբ աշխատատեղերի հնարավորությունները շրջանավարտների համար**

Ներկայացնել ծրագրի շրջանավարտների պոտենցիալ աշխատատեղերի և կարիերային աճի հնարավորությունները: Եթե ծրագիրը նախատեսված է՝ բավարարելու տեղային, ազգային կամ միջազգային գործատուների (ձեռնարկությունների, կազմակերպությունների, պետական մարմինների) կոնկրետ պատվերները, այսինքն՝ ներմուծվում է նպատակային ձևով, ապա դա հավաստել համապատասխան փաստաթղթերով:

## **12. Դասախոսական ռեսուրսները**

Հավաստել, որ առաջարկվող ծրագրի իրականացման համար ստորաբաժանում/համալսարանում առկա է անհրաժեշտ որակավորումով և թվակազմով դասախոսական անձնակազմ: Ներկայացնել այն դասախոսների տվյալները (CV-ի տեսքով), որոնց մասնակցությունը ծրագրի իրականացմանը երաշխավորվում է:

## **13. Դասախոսների վերապատրաստման կարիքները**

Հիմնավորել առաջարկվող ծրագրի ներդրման համար դասախոսների վերապատրաստման կարիքները (օրինակ՝ նոր դասընթացների, ուսուցման նոր տեխնոլոգիաների, նոր սարքավորումների և տեխնիկական միջոցների յուրացման համար) և հնարավորությունները:

## **14. Պահանջներ ուսումնական տարածքների և լաբորատոր սարքավորումների վերաբերյալ**

Հիմնավորել, որ ծրագրի իրականացման համար ստորաբաժանումում առկա են անհրաժեշտ ուսումնական և օժանդակ տարածքներ, լաբորատոր և գիտակրթական անհրաժեշտ սարքավորումներ կամ դրանք կարող են հատկացվել մինչև ծրագրի սկսվելը:

## **15. Քումվյութերային ենթակառուցվածքը և ուսուցման տեխնիկական միջոցները**

Նկարագրել ստորաբաժանումում առկա քոմպյուտերային բազան և դասավանդման առաջարկվող տեխնիկական միջոցները, որոնք անհրաժեշտ են ծրագրի իրականացման համար (քոմպյուտերային դասարաններ ու լաբորատորիաներ՝ քոմպյուտերային աջակցությամբ և օնլայն ուսուցմամբ, ինչպես նաև վիրտուալ լաբորատոր աշխատանքների կիրառման հնարավորություններ): Նշել, թե տեխնիկական ինչպիսի լրացուցիչ, ներառյալ քոմպյուտերային միջոցներ կպահանջվեն առաջարկվող ծրագրի ներդրման դեպքում և ինչպես պետք է դրանք ձեռք բերվեն:

**16. Գրադարանային և ինֆորմացիոն այլ ռեսուրսներ**

Նշել, թե մասնագիտական ինչպիսի գրականություն, ուսումնասմթողական ու տեղեկատվական նյութեր (տպագիր կամ էլեկտրոնային) են առկա համալսարանի գրադարանում և ինչ նոր նյութեր ձեռք բերելու կամ մշակելու անհրաժեշտություն կա:

Ծրագրի աշխատանքային խմբի ղեկավար.....

Ֆակուլտետի ղեկան/դեպարտամենտի վարիչ.....

Հայտը քննարկվել և հավանության է արժանացել ֆակուլտետի խորհրդի/դեպարտամենտի ժողովի կողմից (որոշում թիվ....., ամսաթիվ):